Մարդը բռնապետական հակումներ ունի, երազում է, թե երբ է մի օր ազատվելու քննադատություններից, նյարդերն ամեն օր տեղի են տալիս, չկա օր, որ սկանդալների մեջ չհայտնվի: Ինքը հրահրում է, ինքը պատասխանում, ինքը գոռում, ինքը ներվայնանում կամ գուցե չի էլ ներվայնանում, դա էլ հերթական դերասանությունն է, գուցե:

Կարդացեք՝ էջ 4

Ինքն իրավունք չունի խոսելու որեւէ հերոսի մասին, «փախած» անվանելու հերոսի աղջկան: Անվանել «փախած» մեկին, որի ամբողջ մանկությունն անցել է պատերազմի մեջ: Իրեն ես չեմ լսում, ես նեղանում եմ այն մարդկանցից, ովքեր իրեն հավատում են, ընդունում են իր ասածները եւ իրենք էլ արցախցիներին անվանում են փախածներ:

Կարդացեք՝ էջ 7

Դառնանք զօղորմին տի տանք բոլոր հայ պատմաբանների անցավորներին: Հայ պատմաբան գիտնականների հետեւողական եւ բազմակողմանի աշխատանքի շնորհիվ է, որ այսօր կա Գզոյանի նվիրած ժողովածուն, եւ այս պատեհ պահին այն հայտնվել է ամերիկյան պաշտոնյայի ձեռքում՝ մի քայլ առաջ պատմությունը կեղծողների գործողություններից:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 53 (4188), 3 ապրիլ, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Թեեւ ապրիլի 11-ին «Լուսավոր Հայաստան» կուսակցությունն արտահերթ համագումար է նշանակել՝ օրակարգում 2 հարց. հաստատել կուսակցության ընտրական ցուցակի առաջին 30 թեկնածուին, ինչպես նաեւ՝ ընդունել կուսակցության նախընտրական ծրագիրը, սակայն, որոշ տեղեկություններով, ԼՀԿ-ի «տունը կռիվ է ընկել», եւ տարաձայնություններ կան հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններին մասնակցել-չմասնակցելու հարցի շուրջ: Բանն այն է, որ տեւական ժամանակ է, ինչ կուսակցության առաջնորդը բանակցում էր Սամվել Կարապետյանի առաջնորդած «Ուժեղ Հայաստան» ուժի հետ, որպեսզի նրանց ցուցակով մասնակցեին, սակայն բանակցությունները սպասված արդյունքը չեն տվել, իսկ ԼՀԿ ղեկավարն արդեն հայտարարել է ընտրություններին մասնակցելու մասին: Սակայն թիմում կան առանցքային դեր ունեցող կուսակցականներ, որոնք կտրականապես դեմ են միայնակ մասնակցելուն, կարծում են, որ անտեղի ռեսուրսների վատնում է լինելու, եւ, ամենակարեւորը՝ իրենց մեղադրելու են ձայներ փոշիացնելու մեջ, քանի որ հարցումներն էլ են ցույց տալիս, որ այս ուժն անցողիկ շեմը հաղթահարելուց շատ հեռու է: Սակայն Մարուքյանը կողմ է մասնակցությանը: Թե ինչպես կհանգուցալուծվի այս վեճը, եւ արդյոք որոշ կուսակցականներ չեն համաձայնի ընդգրկվել ցուցակում, պարզ կդառնա մեկ շաբաթից:

Որոշ տեղեկություններով՝ Կրեմլում դեռ շաբաթներ առաջ են վերջնական որոշման հանգել, որ Նիկոլ Փաշինյանի հետ հնարավոր չէ շարունակել հարաբերությունները, քանի որ նա Մոսկվայում մի բան է խոստանում, հասնում է Հայաստան՝ բոլորովին այլ բան է անում եւ գործում է հայ-ռուսական հարաբերությունների դեմ: Ուստի բոլոր առանցքային կառույցների ղեկավարներին շրջաբերական է իջեցվել՝ ամեն ջանք գործադրել, որ Հայաստանում իշխանության գա հայ-ռուսական հարաբերությունները վերականգնելու ծրագիր ունեցող ուժ: ՔՊ-ականները հույս են ունեցել Հայաստանում հակառուսական տրամադրություններ հրահրել, խոսել «հիբրիդային պատերազմի» եւ երաշխավորից ազատվելուց հետո «պետություն ձեռք բերելու մասին», բայց Ռուսաստանի հետ էլ «սիլիբիլի» անել: Դա է պատճառը, որ Մոսկվա այցելության ժամանակ նախ Ալեն Սիմոնյանն է փորձել հանդիպել Հայաստանի հարցերով կրեմլյան կուրատոր Կիրիենկոյի հետ եւ մերժում է ստացել, ապա Փաշինյանն է փորձել կազմակերպել Արայիկ Հարությունյանի եւ Կիրիենկոյի հանդիպումը, դարձյալ՝ ապարդյուն: Իսկ նախօրեին Պուտինն ուղիղ տեքստով ասաց, որ ով էլ լինի ՀՀ իշխանություն, իրենք աշխատելու են նրա հետ:

Դու մենակ ես, մենակ ես

Պետք չէ զարմանալ այն նյարդայնության, հիստերիայի, ջղաձգումների, անհավասարակշիռ պահվածքի եւ տարօրինակ միմիկայի վրա, որ նկատում ենք Նիկոլ Փաշինյանի մոտ: Ոչ ոք չէր դիմանա, շատերս ուղղակի ողջ չէինք մնա, եթե մեր սեփական ժողովրդին, մեր պետությանն այդքան վնաս պատճառած լինեինք, այդքան ստեինք ու ստերի մեջ խճճվեինք, լարախաղացի նման դեգերեինք թշնամու եւ բարեկամների, Արեւմուտքի եւ Արեւելքի, բարի ու չարի, վախի եւ քաջության միջեւ: Այդքան սթրեսի ենթարկվեինք, այդքան փակուղու մեջ լինեինք եւ երկիրն էլ մղած լինեինք այսպիսի խոր ու անհուսալի փակուղի: Հետն էլ փորձեինք վերարտադրվել, որովհետեւ ապրել ենք ուզում եւ լավ ապրել ենք ուզում: Եթե փորձեինք մարդկանց համոզել, որ մածունը սեւ է, եւ չարը՝ բարի: Փորձեինք հանրության նսեմ կրքերը ջրի երես հանել եւ հույսը դնել մարդկանց խավարամտության, դյուրահավատության, հիմարության ու անգրագիտության վրա եւ քաջ գիտակցեինք, որ խելացի ու գրագետ զանգվածը, եթե անգամ չի ատում ու զզվում քեզնից, ապա գոնե շատ լավ հասկանում է, թե ինչ է կատարվում, եւ նվազագույնը՝ խղճում է ու արհամարհում քո ամոթալի ջանքերը: Ոչ մի բանական մարդ, իրականում, չէր դիմանա այս հոգեկան եւ էմոցիոնալ փորձությանը, որով անցնում է Նիկոլ Փաշինյանը մենակ: Մենակ՝ որովհետեւ նրա թիմում ոչ ոք մազաչափ չի թեթեւացնում նրա հոգսը: Նրա իշխանությունից օգտվողները շատ են, բեռը կիսողներ չկան, եւ անգամ կողակիցն իր կողքին չէ, չնայած հեռվից ամեն ինչով աջակցում է: Նա մենակ է նաեւ այն պատճառով, որ մեր երկրում կատարված ամեն ինչի միակ պատասխանատուն է եւ իր որոշումները կայացնելիս՝ անգամ եթե ունի խորհրդատուներ, նրանք ստվերում են եւ երբեք չեն կիսելու պատասխանատվությունը, անգամ երբ ինքը պատասխան տա օրենքի առաջ:

Բաքվի գերությունից վերադարձած Գեւորգ Սուջյանն ակտիվ է սոցցանցերում, հիմնականում՝ հօգուտ իշխանության: Ասել էր, որ բիզնեսով է զբաղվում, պարզվեց՝ ՔՊ-ի սրտիկներով շապիկներ են արտադրում: Նա ասաց, որ միայն շապիկների լոգոներ չեն, նաեւ՝ անկողնային պարագաներ, սրբիչներ. «Մենք չենք ֆիքսվում մեկ ոճի վրա, օրինակ՝ սրտիկներով շապիկներ: Ասեղնագործում ենք ցանկացած գաղափար՝ ըստ պատվիրատուի ցանկության»: Պատվերները բազմազան են, հաճախորդները՝ տարբեր: Իսկ հետագայում կարող է ՔՊ-ի հետ քաղաքական-կուսակցական գործընկերություն ծագել: «Այս պահին հստակ ծրագրեր չունենք, բայց զարգացումը մշտական գործընթաց է, եւ ապագան բաց է նոր հնարավորությունների համար»:

ԱՐՑԱԽԻ ԴՐՈՇԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԵՌԱՑՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Արցախի դրոշը դպրոցի «փառքի անկյունից» չհեռացնելու համար օրերս աշխատանքից ազատման դիմում է գրել Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի դպրոցի տնօրեն Կարինե Սմբատյանը: Դրոշն Արցախի Հադրութի շրջանից են ուղարկել Սարդարապատի աշակերտներին՝ ի նշան երախտագիտության, որ դպրոցի սաները թե՛ ապրիլյան պատերազմի, թե՛ 44-օրյայի օրերին քաղցրավենիք են ուղարկել Հադրութի զինծառայողներին: Նրանք էլ դրոշի վրա իրենց անունները գրված՝ ուղարկել են դպրոցին: Սակայն Փաշինյանի արցախատյաց քաղաքականության արդյունքում եւ ԿԳՄՍՆ-ից վերջերս դպրոցներին ուղարկված շրջաբերականից հետո դպրոցի տնօրինությունը կանգնել է ընտրության առաջ՝ կամ հեռացնել հերոսների անկյունը՝ դրոշը ներառյալ, կամ տնօրենը պետք է հրաժեշտ տա պաշտոնին: Սկզբում Արմավիրի փոխմարզպետն է որպես սուրհանդակ գնացել, սակայն չի կարողացել ճնշել Կարինե Սմբատյանին եւ ձեռնունայն հեռացել է: Ապա անձամբ մարզպետ Վահրամ Խաչատրյանն է դպրոց այցելել ու տնօրենին հորդորել՝ կամ հեռացնում է, կամ ինքն է հեռանում: Սմբատյանը երկրորդ ճանապարհն է ընտրել, երեկ նաեւ գրառում էր արել. «Պաշտոնը ժամանակավոր է, հայրենիքը՝ հավերժ: Իմ հեռացումը կամ պաշտոնից զրկվելը փոքրագույն գինն է այն ամենի դիմաց, ինչին ես հավատում եմ եւ ինչին ծառայում եմ: Ես չեմ կարող լռել, երբ հարվածի տակ են դրվում մեր սաների հոգեւոր ու հայրենասիրական արժեքները: Այն դրոշը, որն այսօր դարձել է քննարկման առարկա, պարզապես խորհրդանիշ չէ. այն մեր աշակերտների համար կենդանի հիշողություն է, սրբություն եւ պատգամ՝ գրված մերօրյա հերոսների ձեռքով: ...Պարոն մարզպետ, Դուք կարող եք հեռացնել ինձ պաշտոնից, բայց չեք կարող հեռացնել հայրենասիրությունն իմ սրտից»:

ԳՈՒՅՔ

ԴԱՏԸ ՏԵՎԵԼ Է 13 ՏԱՐԻ, ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ Է ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԸ

Երջերս դատախազությունը հաղորդագրություն տարածեց, որ պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ լիազորության շրջանակներում ներկայացված հայցերով կայացված վճիռներով, կնքված հաշտության համաձայնություններով եւ դատախազական ներգործության միջոցների կիրառման արդյունքում, 2025 թվականին պետության (համայնքի) սեփականության իրավունքն է վերականգնվել, եւ պետության (համայնքի) փաստացի տիրապետմանն է վերադարձվել շուրջ 66 միլիարդ 934 միլիոն դրամի կադաստրային արժեքով գույք, այդ թվում՝ մանկապարտեզներ, մշակույթի տուն, մարզադաշտ, բնության հուշարձան, պուրակներ, հողատարածքներ եւ դրամական միջոցներ: Նաեւ ըստ համայնքների ներկայացրել էր այն հողամասերը, որոնց նկատմամբ ՀՀ սեփականության իրավունքը վերականգնվել է:

Որպեսզի հասկանալի լինի, թե ինչի մասին է խոսքը՝ գոնե մեկ մարզի օրինակով, գրավոր հարցում էինք ուղարկել Գավառի համայնքապետարան՝ խնդրելով ներկայացնել, թե ինչպես է ՀՀ սեփականության իրավունքը վերականգնվել Գավառ համայնքի Ծովազարդ գյուղում գտնվող 1.5 հա մակերեսով հողամասի նկատմամբ (շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ 13 միլիոն 404 հազար դրամ), Գավառ համայնքում գտնվող՝ 0.2967 հա մակերեսով, 1.303 հա մակերեսով, 3.2104 հա մակերեսով, 0.8041 հա մակերեսով հողամասերի նկատմամբ (69 միլիոն 727 հազար դրամ), Գավառ համայնքի 40.6 հա մակերեսով հողամասի նկատմամբ (434 միլիոն 700 հազար դրամ) եւ 5.6 հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ 69 միլիոն 727 հազար դրամ արժողությամբ:

Հարցրել էինք, թե տվյալ հողամասերն ում են պատկանել, աճուրդով են գնվել, ինչքա՞ն գումարով, ո՞ր թվականին: Համայնքին վերադարձնելուց հետո, տվյալ հողամասը կրկին աճուրդով է վաճառվելու, թե՞ ուղղակի համայնքի սեփականության իրավունքն է վերականգնվել, իսկ հողամասի սեփականատերերը շարունակելու են տնօրինել հողամասերը:

Ի պատասխան, համայնքապետարանից գրել են. «Հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված դիմումում նշել եք միայն հողամասերի մակերեսներ, որոնք բավարար չեն հստակ նույնականացնելու՝ որ հողամասերի մասին է պահանջվող տեղեկատվությունը: Հողամասերը նույնականացնելու համար, խնդրում եմ տրամադրել կադաստրային ծածկագիր, առկայության դեպքում՝ հասցեներ կամ սեփականության իրավունքի վկայականների համարներ»:

Այսինքն ստացվում է, որ Գավառի համայնքապետարանում չգիտեն, թե դատախազությունն իրականում որ հողամասերն է հետ բերել, չգիտեն՝ ինչի մասին է խոսքը: Մենք ինքնուրույնաբար պարզեցինք, թե ում է պատկանել Գավառ համայնքի Ծովազարդ գյուղում գտնվող՝ 1.5 հա մակերեսով հողամասը: Տեղեկացանք, որ հողամասը «Սեւան» ազգային պարկը 2009 թվականին՝ կառուցապատման հիմունքով, 25 տարի ժամկետով վարձակալության է տվել «Կարեն» արտադրական կոոպերատիվին՝ վառելիքի լիցքավորման կայանի, առեւտրի եւ հանգստի գոտի կազմակերպելու նպատակով (այդ թվում՝ 1,2 հա՝ հանգստի գոտու եւ 0,2 հա՝ առեւտուր կազմակերպելու համար): 3 տարի անց՝ 2012-ին, ՀՀ դատախազությունը հայց է ներկայացրել ընդդեմ «Կարեն» արտադրական կոոպերատիվի՝ գործարքը եւ դրանից ծագող իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու եւ հողամասը վերադարձնելու պահանջով: Այսինքն, դա դեռ նախկիններն են փորձել հետ բերել: 13 տարի տեւած դատավարության արդյունքում՝ 2025-ին դատարանը հայցը բավարարել է. «Անվավեր է ճանաչել Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս «Սեւան ազգային պարկ» ՊՈԱ կազմակերպության տնօրեն Գագիկ Մարտիրոսյանի եւ «Կարեն» արտադրական կոոպերատիվի նախագահ Ռուբեն Ղարիբյանի միջեւ 2008 թ. դեկտեմբերի 30-ին կնքված եւ 2009 թ. մարտի 11-ին Սեւան նոտարական տարածքի նոտարի կողմից վավերացված «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» թիվ 1356/05 պայմանագիրը»: Անվավեր է ճանաչել նաեւ Կադաստրի կոմիտեի գրանցումը, պարտավորեցրել է «Կարեն» արտադրական կոոպերատիվին՝ «իր ապօրինի տիրապետման տակ գտնվող... հողամասը հանձնել «Սեւան» ազգային պարկին»: Ծովազարդ գյուղում գտնվող՝ 1.5 հա մակերեսով հողամասը հետ է վերադարձվել Հայաստանի Հանրապետությանը եւ անհատույց իրավունքով տրամադրվել է «Սեւան» ազգային պարկին՝ կառավարման նպատակով: Չի բացառվում, որ առաջիկայում այս տարածքը «Սեւան» ազգային պարկը կրկին վարձակալությամբ տրամադրի մեկ այլ անձի: Ահա՝ այսպիսի «հերոսական» գործ է կատարել դատախազությունը:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՊԱՇՏՈՆՅԱՆ, ԿԻՆՆ ՈՒ ՓԵՍԱՆ՝ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄ

Երեւանի քաղաքապետարանի, դրա ենթակայությամբ գործող վարչական շրջանների հետ կապված՝ բազմաթիվ վարույթներ են հարուցվել վերջին տարիներին: Բայց հանրությունը դրանց մասին իմանում է հարուցման պահին, երբ մարդիկ են ձերբակալվում, կալանավորվում, պաշտոնյաներ են ազատվում, իսկ թե հետո ինչ է լինում, հաճախ անհայտ է մնում: Մենք տեղեկացանք, որ ամիսներ առաջ մի սկանդալային ձերբակալություն էլ է տեղի ունեցել Երեւանի քաղաքապետարանում: Ձերբակալվել է քաղաքապետարանի «Գերատեսչական շենքերի պահպանման եւ շահագործման» ՓԲ ընկերության տնօրենի տեղակալ Արմեն Մարտոյանը, նրա հետ մեղադրյալի աթոռին են հայտնվել կինը՝ Անին, եւ քրոջ փեսան: Մարտոյանը, ըստ մեղադրանքի, շորթել է մոտ 84 միլիոն դրամ, կինը մոտ 30 միլիոն դրամ «փողերի լվացում է» արել՝ «ամուսնու հանցավոր ճանապարհով ստացած գույքն ապօրինի կերպով շրջանառության մեջ դնելով»: Փեսային էլ նույն մեղադրանքն է առաջադրվել՝ «մոտ 29 միլիոն դրամի գույքի օրինականացում, որը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով»: Խոշոր չափերի գումարներ շորթելու, այլ ծանր հանցանքների մեջ մեղադրվող անձինք, սակայն, պարզվում է, ազատության մեջ են. հիմնական դերակատարի՝ Մարտոյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել վարչական հսկողությունը, մյուս երկուսի նկատմամբ՝ բացակայելու արգելքը:

Արմեն Մարտոյանի փաստաբան **Արմեն Թեւանյանը** «Հրապարակ»-ին ասաց, որ մեղադրանքը շորթման մասին չէ, այլ՝ փողերի լվացման: Ապա նշեց՝ այս քրեական վարույթն իրավաբանության հետ կապ չունի, իր պաշտպանյալը շինարարությամբ է զբաղվել, որի արդյունքում էլ 80 միլիոն դրամ գումար եկամուտ է ստացել, իսկ իրավապահները դա վերագրել են փողերի լվացմանը: Թեւանյանը չցանկացավ այլ մանրամասներ ներկայացնել՝ նշելով, թե դատական նիստի է շտապում: Վերջում ավելացրեց, որ իր պաշտպանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված է եղել տնային կալանքը, ապա փոխվել է վարչական հսկողությամբ, գրավով, ինչը եւս խոսում է ոչ այս մեղադրանքի օգտին:

Անանա ՊԱՊԻԿՅԱՆ

ՆՈՐ ՏՆՕՐԵՆԸ ՄԵԿՈՒՍԱՑԵԼ Է, ԿՈԼԵԿՏԻՎԻ ՀԵՏ ՉԻ ՇՓՎՈՒՄ

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Էդիտա Գզոյանի պաշտոնաթողությունից եւ նրա հետ կապված սկանդալից անցել է մոտ մեկ ամիս: Հիշեցնենք, որ Գզոյանն ԱՄՆ փոխնախագահ Ջեյ դի Վենսին ուղեկցել էր հուշահամալիր եւ ցեղասպանությանն ու Արցախին նվիրված գրքեր նվիրել, ինչի պատճառով էլ Նիկոլ Փաշինյանն անձամբ նրան ազատել էր պաշտոնից: Գզոյանը պաշտոնաթողությունից հետո արձակուրդ է գնացել եւ դեռ չի վերադարձել, նրա փոխարեն տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Նիկոլ Փաշինյանի նախկին օգնական Հրաչյա Թաշչյանը:

Մենք հետաքրքրվեցինք, թե ինչ մթնոլորտ է տիրում թանգարանում, ինչքանով է նոր տնօրենը մտել աշխատանքային հուն: Մեզ պատմեցին, որ նա կոլեկտիվից մեկուսացած է, չի կարողանում ինտեգրվել աշխատակազմի հետ: Չնայած համառ ջանքեր է գործադրում, սակայն գիտաշխատողներին չի կարողանում իր կողմը գրավել եւ այս պահին «թայմ աութ» է վերցրել՝ մեկուսացել իր առանձնասենյակում: Աշխատանքի է գալիս, առանձնանում աշխատասենյակում եւ ամբողջ ընթացքում ոչ մեկի հետ չի շփվում: Մեր տեղեկություններով, վերադասից նրան հրահանգել են՝ եթե չես կարողանում քո կողմը գրավել կոլեկտիվին, ավելի լավ է՝ չշփվես, ռիսկերի չգնաս, որ նոր սկանդալ չառաջանա, նաեւ՝ առաջիկայում նոր պլաններից կամ թանգարան-ինստիտուտի ճակատագրից առհասարակ չխոսես, քանի որ ցանկացած անզգույշ խոսք կարող է նոր կրքեր բորբոքել, ինչը նախընտրական շրջանում ցանկալի չէ:

Բայց կոլեկտիվում հասկանում են, որ իշխանություններն ընդամենը հրադադար են հայտարարել, իսկ ընտրություններից հետո, եթե վերընտրվեն, մտադիր են ՀՑԹԻ-ում արմատական փոփոխություններ իրականացրել, այն հիմնովին կրճատել, նեղացնել ֆունկցիաները եւ մի հարմար պահի առհասարակ փակել, քանի որ Թուրքիայից նման պահանջ է դրված: Իհարկե, դեռ չեն խոսում այն մասին, թե ինչ փոփոխություններ են սպասվում, ասում են՝ դեռեւս հստակեցված չէ: Ավելի վաղ գրել էինք, որ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան ընդառաջ, նոր ցուցադրություն չի նախատեսվում. նախորդ տարվա ցուցադրությունն է կրկնվելու: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի նորոգումն էլ դեռ շատ հեռու է ավարտվելուց, թեեւ ապրիլի 24-ը սարերի հետեւում է:

«Հրապարակ»-ը թեմայի շուրջ զրուցել է ՀՑԹԻ-ի նախկին տնօրեն, այժմ բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու **Սուրեն Մանուկյանի** հետ:

- Այս տարի՝ Ցեղասպանության զոհերի հիշատակի օրն ի՞նչ միջոցառումներ են նախատեսվում իրականացնել:

- Քանի որ ես տնօրինության անդամ չեմ, դժվարանում եմ ասել, թե ինչ է անելու նոր տնօրենը, ինչ մտադրություններ կան:

- Հրաչյա Թաշչյանի հետ շփում չունե՞ք:

- Ես շփում չունեմ, երբեք անձնական շփումների մեջ չեմ եղել ու հիմա էլ չկամ: Ես իմ աշխատասենյակում գիտությամբ եմ զբաղվում:

- Իսկ նոր տնօրենը ժողովներ չի՞ արել, աշխատանքային քննարկումներ չե՞ն անցկացվում:

- Խառը շրջաններում եղել են ժողովներ, բայց դրանք ոչ թե մեր հետագա աշխատանքի մասին էին, այլ այն մասին, թե ինչու են հանում մեր նախորդ տնօրենին, ինչ խնդիր է: Որպես այդպիսին, աշխատանքային ժողով տեղի չի ունեցել, ես գոնե նման ժողովի չեմ մասնակցել: Գուցե աշխատանքային ժողովներ ինքն անում է հաշվապահի կամ գիտքարտուղարի հետ, չգիտեմ, բայց գիտական մասով մեզ հետ ժողով տեղի չի ունեցել:

Արմինե ՆԱՎՈՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՍԱ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՊՈՒՏԻՆ-ՓԱՇԻՆՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Նախօրեին Մոսկվայում կայացած Պուտին-Փաշինյան հանդիպման շուրջ քննարկումները չեն դադարում, փորձագետներն ու վերլուծաբանները հանդիպումը գնահատում են աննախադեպ, անգամ՝ սենսացիոն, երբ դիվանագիտական ձեւակերպումները դրվեցին մի կողմ, եւ բաց տեքստով անցան փոխադարձ մեղադրանքների ու շանտաժի լեզվին: Եթե Վլադիմիր Պուտինը 2021 թվականի ընտրություններից հինգ պակաս Փաշինյանի հետ հանդիպմանը փորձում էր «մաքրել» վերջինին դավաճանի պիտակից՝ թերեւս հույս ունենալով, որ Փաշինյանը վերարտադրությունից հետո կանխատեսելի գործընկեր կլինի իր համար Հարավային Կովկասում, ապա նախօրեի հանդիպումից պարզ դարձավ, որ Մոսկվան այլեւ չի վստահում Փաշինյանի «արցունքներին» եւ աշխարհաքաղաքական լարախաղացությանը՝ Հյուսիսի եւ Արեւմուտքի միջեւ, ու հստակ ընտրության առաջ է դնում ՀՀ ղեկավարին:

Փաշինյան-Պուտին հանդիպման բաց հատվածի առանցքային թեմաներից մեկը ԵԱՏՄ-ին ու ԵՄ-ին էր առնչվում: Մոսկվան ավելի վաղ հայտարարել էր, որ միաժամանակ եվրոպական եւ եվրասիական ինտեգրացիոն նախագծերին մասնակցությունն անհնարին է: Երեկ Պուտինն արդեն ուղիղ տեքստով Փաշինյանին ասաց, որ պետք է ընտրել երկուսի միջեւ, հակառակ դեպքում տնտեսական բարդություններ են մեզ սպասվում: «Մենք տեսնում ենք, որ Հայաստանում քննարկում է գնում Եվրամիության հետ հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ: Մենք դրան շատ հանգիստ ենք վերաբերվում: Հասկանում ենք, որ ցանկացած երկիր մաքսիմում համագործակցություն է փնտրում երրորդ երկրների հետ: Բայց դա պետք է բացահայտ լինի եւ ազնիվ՝ հենց սկզբից: Եվրամիության հետ մաքսային միության մեջ լինելն ու ԵԱՏՄ-ն իրար հետ հնարավոր չեն: Պարզապես հնարավոր չէ»,- նախօրեին ասաց ՌԴ նախագահը, ապա ակնարկեց, որ կարող են Հայաստանի համար էլ գազի գինը բարձրացնել, ինչպես Եվրոպայի համար է. «Ինչ վերաբերում է էներգակիրների գնին, գազը Եվրոպայում կտրուկ թանկացել է՝ 600 դոլար՝ հազար խորանարդի դիմաց, իսկ Ռուսաստանը Հայաստանին 177.5 դոլարով է վաճառում: Տարբերությունը հսկայական է, էական է: Մենք այստեղ ձեզ հետ հաճախ վիճում ենք, ես գիտեմ, որ դուք պնդում եք, որ էներգակիրների գները մի փոքր այլ կերպ որոշվեն, բայց տեսեք՝ 600 դոլար ու 177.5 դոլար»:

Փաշինյանն արձագանքեց, թե ինքը գիտի, որ երկու միություններին միաժամանակ անդամակցել հնարավոր չէ. «Երբ հնարավոր չլինի, ու պետք լինի որոշում կայացնել, ես վստահ եմ, որ Հայաստանի քաղաքացիները որոշում կընդունեն»: Ինչ վերաբերում է նոր ատոմակայանի կառուցմանը, Փաշինյանն ասաց, որ սա, բացի ռուսաստանցի գործընկերներից, այլ երկրների հետ էլ են քննարկում՝ «փնտրում ենք Հայաստանի Հանրապետության համար ամենաշահավետ առաջարկը»:

Հաջորդ հարցը, որը հայ-ռուսական հարաբերությունների լարվածության պատճառն էր դեռ 2022-ից, ՀԱՊԿ-ն է: Պուտինն ասաց՝ տեղյակ է, որ հայկական կողմը դժգոհություններ ունի ՀԱՊԿ-ի մասով: «Բայց ես կարծում եմ՝ ակնհայտ է, որ Պրահայում 2022 թվականին, երբ Դուք ճանաչեցիք Ղարաբաղն Ադրբեջանի մաս, արդեն ներադրբեջանական դարձած այս հարցին ՀԱՊԿ-ի միջամտությունը բոլորովին ճիշտ չէր լինի»: Փաշինյանը, իր սովորության համաձայն, մեղադրեց Ռուսաստանին, թե Ղարաբաղն Ադրբեջանի կազմում ինքը ճանաչել է «այն բանից հետո, երբ Ռուսաստանի բարձրագույն ղեկավարությունն այդ մասին հրապարակավ խոսեց»: Այսինքն, ՀԱՊԿ-ին անդամությունը սառեցնելու համարձակություն ունի, բայց Արցախի հարցում առաջնորդվել է Պուտինի եւ Ռուսաստանի խոսքով: Բայց առավել ուշագրավը զրույցի ներքաղաքական դրվագն էր. ՌԴ ղեկավարը կշտամբեց Փաշինյանին, թե Հայաստանում ռուսական անձնագրով անձը քաղաքականությամբ զբաղվելու փորձի համար գտնվում է անազատության մեջ: «Դա ձեր որոշումն է, մենք չենք խառնվում: Բայց կուզեինք, որ նրանք կարողանային մասնակցել այդ ներքաղաքական աշխատանքին»,- հավելելով, որ Մոսկվան մշտապես առաջնորդվելու է հայ ժողովրդի շահերով: «Ռուսաստանում շատ հայեր են ապրում: Մենք համարում ենք ավելի քան 2 միլիոն մարդ: Եվ Հայաստանում շատ քաղաքական ուժեր կան, որ ռուսամետ են: Մենք շատ կուզեինք, որ այդ բոլոր քաղաքական ուժերը, քաղաքական գործիչները ընտրությունների ընթացքում կարողանային մասնակցել ներքաղաքական աշխատանքին»: Փաշինյանն երեկ արդեն ծիծաղ առաջացնող պատասխան տվեց, թե Հայաստանը դեմոկրատական երկիր է, ու ակնարկեց, որ մեզանում սոցցանցերից օգտվելն ազատ է՝ ոչ մի սահմանափակում չկա, եւ շատերը նույնիսկ կարծում են, թե դա չափից շատ է: Մարդն արդեն գերտերության հետ է ոտք գցում եւ ակնարկում, թե՝ ձեր համեմատ մենք շատ դեմոկրատական ենք:

«Եվ ընդհանուր համատեքստում, անկեղծ ասած, մեզ մոտ ազատազրկման վայրերում քաղաքական գործընթացների մասնակիցներ չկան»,- մոռանալով, որ իր գրառումների արդյունքում են կալանավորել Սամվել Կարապետյանին, սրբազաններին: Նաեւ շեշտեց, որ մեր օրենսդրությամբ ՀՀ ընտրություններին կարող են մասնակցել միայն այն մարդիկ, ովքեր բացառապես հայկական անձնագիր ունեն: Իսկ ռուսական անձնագիր ունեցողները չեն կարող ո՛չ պատգամավորի, ո՛չ էլ վարչապետի թեկնածու լինել:

Քաղաքագետ **Գրիգոր Բալասանյանը** Պուտին-Փաշինյան հանդիպման մի շարք մեսիջներ է նշում. «Արձանագրում առաջին. Փաշինյանին ընտրության առջեւ են կանգնեցնում՝ կամ ԵԱՏՄ, կամ ԵՄ, եւ այդ ընտրությունը նաեւ էներգետիկ արժեք է ունենալու իր մեջ: Երկրորդ. արձանագրվեց, որ Հայաստանում այսօր կան մարդիկ, որ քաղաքական հայացքների համար գտնվում են բանտում, եւ ռուսական անձնագրով քաղաքացիներ կան նաեւ, ինչպես նաեւ՝ Արցախի հարցով փաստացի նշվեց, որ այն Ռուսաստանի համար շարունակում է մնալ զգայուն հարց, այսինքն՝ Արցախի հարցը փակված չէ, եւ սեփական հայրենիքում ապրելու արցախահայերի իրավունքը Ռուսաստանը շարունակում է համարել զգայուն հարց: Ավելացնենք նաեւ ատոմակայանի հարցը, ես չեմ բացառում, որ երեկ քննարկվել է երկաթուղու կոնցեսիայի հարցը, որը Ռուսաստանի համար եւս կարմիր գիծ է»:

Նկատեցինք, որ որոշ փորձագետներ հանդիպումից տպավորություն են ստացել, որ Պուտինը երաշխավորում է, որ եթե Փաշինյանը չընտրվի, էսկալացիա եւ պատերազմ չի լինի, ինչով տեւական ժամանակ իր ժողովրդին սպառնում է Նիկոլ Փաշինյանը, նա բաց տեքստով ասաց, որ կաշխատեն ցանկացած իշխանության հետ: «Ես հասկացա մի բան, որ Ռուսաստանի նախագահը հստակ հասկացրեց, որ առանց ՌԴ իմացության եւ համաձայնության, Հարավային Կովկասում Հայաստանն ու Ադրբեջանն ինքնուրույն հարցեր չեն կարող կարգավորել եւ դրսից էլ նոր՝ արտաքին քաղաքական հովանավորների հրավիրել, որոնք այստեղ կլինեն տերուտիրական»:

Քաղաքագետի խոսքով՝ ակնհայտ է, որ Մոսկվայում այլեւս չեն հավատում այն հավաստիացումներին, որ ինչ որ արվում է Հայաստանում, Ռուսաստանի դեմ չէ, եւ այս՝ բավականին բաց ու կոշտ խոսակցությունն էլ դրա մասին է վկայում. «Ավելին, ինձ մոտ այն տպավորությունն է, որ սա կարող է լինել Պուտին-Փաշինյան վերջին հանդիպումը, որովհետեւ ով ինչ մտածում էր մեկմեկու մասին, ասաց, մի կողմ դրեցին դիվանագիտությունը եւ առանց քաշվելու, առանց դիվանագիտական խորամանկությունների՝ ասացին»:

Նշենք նաեւ, որ Փաշինյան-Պուտին հանդիպմանը միջադեպեր եւ բողոքի ակցիաներ են ուղեկցել, մասնավորապես Մոսկվայում Հայաստանի դեսպանության շենքի առջեւ բողոքի ակցիա է ընթացել՝ ի պաշտպանություն Եկեղեցու: Տելեգրամյան ալիքներում տարածված կադրերում նաեւ հոգեւորականներ կան, ակցիայի մասնակիցները պահանջում էին չմիջամտել Հայ առաքելական եկեղեցու ներքին գործերին:

Փաշինյանը Ռուսաստանի հոգեւոր թեմի առաջնորդին՝ Եզրաս արքեպիսկոպոսին, հիշեցնենք, մեղադրել էր սովետական ԿԳԲ-ի գործակալ լինելու մեջ: Մի միջադեպ էլ մոսկովյան հյուրանոցի միջանցքում է տեղի ունեցել. մի խումբ հայ կանայք Փաշինյանին դավաճան են անվանել, իսկ մի տղամարդ էլ մոտեցել, խնդրել է՝ նկարվել երեխայի հետ, իսկ հետո բացատրել, որ դա անում է այն պատճառով, որ երեխան իմանա, թե ով է Ղարաբաղը հանձնել: Եվ այս ծանր այցի սթրեսն արտահայտվեց հաջորդ օրը, երբ Փաշինյանը կառավարության նիստից հետո իր նյարդայնությունը թափեց լրագրողների գլխին՝ խախտելով տարրական բարեկրթության կանոնները:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԲԵՐԴՈՒՄ ՀԱՅԿԱԶ ԲԱՂՄԱՆՅԱՆԻՆ ԼԱՎ ԵՆ ՀԻՇՈՒՄ

Դատախազությունը երեկ հաղորդագրություն է տարածել, որով հայտնել է, որ պահանջում է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Հայկազ Բաղմանյանից, հօգուտ պետության, բռնագանձել 11 անշարժ եւ շարժական գույք, շուրջ 3 միլիարդ 56 միլիոն դրամ: Դատախազությունը Նիկոլ Փաշինյանի իշխանության 8 տարիներին չգիտե՞ր Հայկազ Բաղմանյանին պատկանող գույքի ապօրինի ծագման մասին, որպեսզի «թալանը կոպեկ առ կոպեկ կամ քյաբաբ առ քյաբաբ վերադարձնելու» գործընթացի շրջանակներում դրանք ավելի վաղ բռնագանձելու հայց ներկայացրած լիներ:

Չգիտես ինչու, ԱԺ ընտրություններից 2 ամիս առաջ հանկարծ իմացել է այդ մասին ու գործի անցել: Մինչդեռ Հայկազ Բաղմանյանը 1993-1999 թվականներին զբաղեցրել է գնդի, բրիգադի հրամանատարի պաշտոն եւ ծառայել է Տավուշի բանակային կորպուսում: Տավուշի մարզի Բերդ համայնքի բնակիչները մեզ պատմեցին, որ իրենց քաղաքի բարձունքում գտնվող, անտառտնտեսությանը պատկանող, պաշտպանության նախարարությանը հանձնված երկհարկանի մի մեծ շենք կա, որը թալանվել է հենց 1990-ական թվականներին:

Այն ժամանակ, երբ Հայկազ Բաղմանյանը Բերդի զորամասի հրամանատարն էր, հետո՝ բրիգադի հրամանատարը: Բերդի բնակիչներն ասում են, որ այդ շենքն այժմ էլ նույն վիճակում է եւ գտնվում է ՊՆ հաշվեկշռում: Բայց բերդցիները նաեւ հիշում են, որ երբ Հայկազ Բաղմանյանը՝ զինծառայության բերումով, Բերդից տեղափոխվեց այլ տարածք՝ ծառայությունը շարունակելու, այդ նույն օրը Պառավաքար-Վազաշեն ճանապարհի վրա իշխող կարեւոր բարձունք-հենակետն առանց դիմադրության հանձնվեց Ադրբեջանի զինուժին:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՄՍԽՈՂ ՎԱՏ ՄԵՆԵՋԵՐ

ԴԻԼԻՋԱՆ

Կարդում եմ Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվությունը. «ՀՀ Տավուշի մարզում Կառավարության 2018-2024 թվականներին իրականացված ծրագրերի ընդհանուր ֆինանսավորումը կազմել է շուրջ 146 միլիոն դոլար»: «Կառավարություն» բառը գրված է մեծատառով, ինչը

ցույց է տալիս Դիլիջանի համայնքապետարանի, համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի մեծ հարգանքը՝ առ կառավարություն: Եվ ինչպես չհարգի Դավիթ Սարգսյանը կառավարությանը, իշխանությանը ու հատկապես՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, երբ բենզալցակայանում լիցքավորող աշխատելուց եւ անձնական գործում «սեռ» բառի դիմաց «արու» գրելուց հետո Ն. Փաշինյանի որոշմամբ է 2021թ. փետրվարի 26-ին նշանակվել Դիլիջան համայնքի ղեկավար: Հետո դարձել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ, ՔՊ Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավար:

Տարբեր պաշտոնյաներ, ՔՊ կուսակցության քարոզիչներ պարբերաբար հանրությանն աչքալուսանք են տալիս, որ տարբեր ծրագրեր իրականացնելու, ինչ-ինչ խնդիրներ լուծելու համար կառավարությունը հատկացրեց այսքան գումար, այնքան գումար՝ փոխանակ նշելու, որ այդ աշխատանքների ֆինանսավորումը պետական բյուջեից է կատարվել, որը գոյացել է հանրության վճարած հարկերից: Ադրբեջանում տարբեր ծրագրերի մասին գրում են, որ նախագահ Իլհամ Ալիեւը դրանց իրականացմանը հատկացրեց այսքան մանաթ, մեր իշխանական քարոզիչները դեռ չեն իջել այդ մակարդակի, չեն գրում, թե վարչապետ Նիկոլ Փաշինյանը հատկացրեց այսքան դրամ, համեստորեն նշում են, որ կառավարությունն է հատկացրել: Հայաստանի բնակիչների զգալի մասը չի ըմբռնում, որ կառավարությունը տարբեր գործառույթներ է կատարում, համայնքներում ծրագրեր է իրականացնում հարկատուներիս մուծած հարկերից, տուրքերից, նաեւ՝ արտերկրից վերցված վարկերով ձեւավորված պետական բյուջեի միջոցներից: Ընդ որում՝ կառավարությունը վատ մենեջեր է, սխալ է կատարում այդ ծախսերը:

Հայաստանում համայնքների ու պետական բյուջեի համաֆինանսավորմամբ՝ սուբվենցիոն կարգով մեծ թվով ծրագրեր են իրականացվում, որոնց իրականացման ժամկետները կապալառու կազմակերպությունների մեղքով, օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով տարիներով ձգձգվում են՝ հետաձգվում: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին երկու անգամ՝ մարտի 5-ին եւ մարտի 12-ին, տեղեկատվական հարցում եմ արել. «2026թ. փետրվարի 12-ին՝ կառավարության որոշմամբ, մարզպետների աշխատակազմերին թույլատրվել է 2022-2025 թվականներին հավանության արժանացած եւ համայնքապետարանների հետ կնքված ենթակառուցվածքների զարգացման սուբվենցիոն ծրագրերի պայմանագրերում կատարել փոփոխություններ եւ դրանց ժամկետները երկարացնել մինչ 2027թ. հունիսի 30-ը: Դա վերաբերում է այն համայնքներին, որտեղ աշխատանքները պետք է ավարտվեին մինչեւ 2025թ. նոյեմբերի 15-ը: Այդ որոշմամբ քանի՞ ծրագրի իրականացում է հետաձգվել, որքա՞ն է դրանց ֆինանսավորման ընդհանուր չափը, այդ ծրագրերի պայմանագրերից քանի՞սն են կնքվել 2022-ին, քանի՞սը՝ 2023-ին, 2024-ին եւ 2025-ին»: Սակայն 2 անգամ էլ ՏԿԵ նախարարությունից ստացած տեղեկատվության մեջ այդ հարցի պատասխանը չի տրվել: Կարծում եմ, որ նախարարությունը թաքցնելու շատ բան ունի՝ հետաձգված, երկարաձգված, սուբվենցիոն բազում ծրագրերի հետ կապված: Տարիներով հետաձգվում, երկարաձգվում են ոչ միայն սուբվենցիոն, այլ նաեւ՝ պետական ծրագրերը: Տավուշի մարզում տարիներով երկարաձգված ծրագրերից են Դիլիջանի մշակույթի պալատի հիմնանորոգումը (այժմ՝ կասեցված), Դիլիջանի Գետափնյա փողոցի եւ դրա հարակից բակերի ասֆալտապատումը, Դովեղի դպրոցի նոր շենքի շինարարությունը եւ այլն:

2025-ին պետական ծրագրով Տավուշի մարզում 1410 կով պետք է արհեստական կերպով սերմնավորվեր, սակայն այդ ծրագիրը չիրականացվեց: Ժամանակին Նիկոլ Փաշինյանը՝ որպես ԱԺ ընդդիմադիր պատգամավոր, նոր վարկեր վերցնելու դեմ շատ էր բողոքում, հիմա իր իշխանությունը կրկնապատիկ նոր վարկեր է վերցնում՝ համայնքներում կիսատ-պռատ որակի ասֆալտապատում անելու, այլ ծրագրեր իրականացնելու համար: Բնակիչներն այդ ծրագրերից ուրախանում են՝ չմտածելով, որ կառավարությունն այդկերպ մեծացնում է 15 միլիարդ դոլարի հասնող Հայաստանի պետական պարտքը, իսկ այդ պարտքը մարելու համար իշխանությունն ավելի է բարձրացնելու հարկերն ու տուրքերը: Դա նման է այն բանին, որ մեկը գյուղական խանութում համագյուղացու անունն ապառիկի՝ «նիսյայի» տետրում գրելով, մթերքների տոպրակով գնա նրանց տուն, գնվածից որոշ մթերքներ իր տուն տանելով: Միամիտ համագյուղացին էլ իր տուն բերված մթերքների համար շնորհակալություն հայտնի բերողին՝ չմտածելով, որ հետո ինքն է գյուղի խանութում փակելու ապառիկ մթերքների պարտքը, որն անգամ ինքը չի կերել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌԱՋ ԱՍՈՒՄ ԷԻ՝ ՆՈՒՅՆՆ ԵՆ, ՀԻՄԱ ԱՍՈՒՄ ԵՄ՝ ՊԱՐՈՆ ՓԱՇԻՆՅԱՆ, ՆԱԽԿԻՆՆԵՐԻՆ ՏՎԵԼ-ԱՆՑԵԼ ԵՔ

«Դրապարակի» զրուցակիցը «Չորրորդ իշխանություն» կայքի խմբագիր **Շողեր Մաթեւոսյանն** է:

- Նիկոլ Փաշինյանն ամեն հինգշաբթի՝ կառավարության նիստից հետո, բրիֆինգի ժամանակ լրագրողների հետ վիճաբանության, ավելի կոնկրետ՝ լեզվակռվի մեջ է մտնում, վիրավորում է լրագրողներին, փորձում է նսեմացնել ԶԼՄ-ների աշխատանքը: Լրագրող Անի Գեւորգյանին երեկ վարչապետն ասաց՝ դուք հատուկ եք ուժայինների դեմը պառկում, որ անցնեն ձեր վրայով, հետո սկսեց բղավել լրագրողի վրա, լռեցնել նրան, եւ այսպես շարունակ: Ի՞նչ կարծիք ունեք Փաշինյանի՝ լրագրողներին ուղղված բառապաշարի մասին:

- Ես էլ էի լսում՝ սարսափելի է: Նիկոլ Փաշինյանն անդադար ինչ-որ լեզվակռիվների մեջ է ներքաշվում: Նա անհավասարակշիռ վիճակում է, գուցե՝ նաեւ նյարդային վիճակում, հատկապես, երբ հակադարձում են նրան, այդ ժամանակ է նյարդային վիճակում հայտնվում, նրան թվում է, թե եթե ինքն ինչ-որ բան է ասում՝ վերջ, այլեւս չի կարելի հակադարձել: Լրագրողների հետ այնպես է խոսում, ասես լրագրողներն իր ենթականերն են: Նա ինչ-որ բան շփոթում է, որովհետեւ լրագրողների հետ չի կարելի խոսել հրահանգիչի տոնով, իսկ նա չի կարողանում այդ տոնից իջնել: Մի խոսքով՝ Փաշինյանի հետ ինչ-որ բան այն չէ, նրա վիճակը վատ է: Ես կարծում եմ՝ դա բոլորի համար է տեսանելի….

- Իշխանական պրոպագանդիստներն ասում են, որ լրագրողներն են չափերն անցնում՝ չեն հարգում բարձրաստիճան պաշտոնյաներին, կիրթ ու մեղմ հարցեր չեն տալիս: Այ, որ նախկինները լինեին իշխանության, լրագրողները չէին համարձակվի այդքան ազատ խոսել նրանց հետ:

- Իսկ այդ նույն նախկինների ժամանակ, որ իրենց պաշտպանում էինք, ինչո՞ւ չեն ասում դա: Ի դեպ, նախկին իշխանություններն էլ էին ասում, որ երկիրը լրագրողներն են խառնում, որ լրագրողներն ամեն ինչ հատուկ են անում եւ այլն…. միշտ է այդպես եղել: Այն լրագրողները, ովքեր իշխանություններին ոչ հարմար խոսք են հնչեցրել, ինչ-որ կերպ թիրախավորվել են, բայց սրանք բոլորին տվել-անցել են: Ամեն բան չափից ավելի սուր է ընկալվում հիմա, եւ ես ուզում եմ վարչապետին հիշեցնել, թե ինքն ինչպես էր իրեն դրսեւորում, երբ լրագրող էր: Մենք՝ ոչ մեկս դեմ չէինք, որ իրենց այդպես են պահում: Հետո նա դարձավ ընդդիմադիր գործիչ, նույնն էլ՝ այդ ժամանակ: Դե հիմա թող դիմանա….

- Նիկոլ Փաշինյանը նախորդ շաբաթ լրագրողներից մեկին ասաց, որ եթե ինքը չլինի Հայաստանի վարչապետը, լրագրողներից շատերն աշխատանք չեն ունենա, հաշմանդամ կդառնան, ֆայլաբազարում կկանգնեն…

- Ասում է՝ կփակեմ օդերը, բայց այդ լրագրողները միշտ էլ եղել են ու կլինեն: Այս մարդը բռնապետական հակումներ ունի, երազում է, թե երբ է մի օր ազատվելու քննադատություններից, հակառակ դեպքում՝ նյարդերն ամեն օր տեղի են տալիս, չկա մի օր, որ սկանդալների մեջ չհայտնվի եւ չհրահրի: Ինքը հրահրում է, ինքը պատասխանում է, ինքը գոռում է, ինքը ներվայնանում է կամ գուցե չի էլ ներվայնանում, դա էլ հերթական դերասանությունն է, գուցե: Լրագրողի նկատմամբ նման անհարգալից բառապաշար, նման հայտարարություններ… դե հերիք եղավ, ամոթ է արդեն….

- Փաշինյանն ու իր թիմը պնդում են, որ նախկին իշխանությունների ժամանակ լրագրողներն ազատ չեն եղել, վախեցած են եղել, իրենք եկել են իշխանության եւ 2018-ից հետո ազատություն են տվել ԶԼՄ-ներին: Սա ասում է մի նախկին խմբագիր, որն ամենասուր քննադատությանն է արժանացրել նախկին իշխանություններին՝ իր խմբագրած թերթի էջերում….

- Ո՞վ ասաց, որ չենք կարողացել քննադատել նախկիններին: Այո, ամեն ինչ էլ եղել է՝ ծեծել էլ են, ջարդել էլ են, ավտոներ էլ են վառել, բայց դուք, պարոն Փաշինյան, նախկիններին տվել-անցել եք: Մի ժամանակ ասում էինք՝ տարբերություն չկա, հիմա ասում եմ՝ նրանց տվել-անցել են:

- Նախկինները գոնե այդքան դատական գործեր չէին սարքում լրագրողների ու խմբագիրների վրա:

- Այո, դե նայած, թե ով ինչի վրա է շեղված լինում: Ես կարծում եմ, որ լրագրողներն այժմ պետք է բոյկոտեն այդ մարդուն եւ չլուսաբանեն նրան: Ես վաղուց եմ բոյկոտել նրան: Նա ուզում է, որ իրեն հարցեր տան, եւ թելադրի իր օրակարգը ողջ հանրությանը: Լրագրողները պետք է միաբան լինեն: Այն ժամանակ կար դա, այսօր ես դա չեմ տեսնում, գուցե ես չեմ տեսնում ուղղակի: Ամեն դեպքում, մի լրագրողի համար ողջ ընդդիմադիր դաշտն իրար կխառնվեր: Աղմուկը շատ բարձր կլիներ, եւ հետո՝ այն ժամանակ կար ակտիվ քաղհասարակություն, հիմա սսկվել են, ձայնները դուրս չի գալիս, հավանաբար, ֆինանսավորվում են իշխանությունների կողմից, դրա համար սսկվել են:

- Ի դեպ, կիրակի օրը Սուրբ Աննա եկեղեցում տեղի ունեցած միջադեպի մասին ի՞նչ կարծիք ունեք: 18-ամյա մի երիտասարդ երկու ամսով կալանավորվեց: Փաշինյանը վստահ է, որ դպրոցական երիտասարդն իրեն ցանկանում էր սպանել:

- Սադրեց: Դա սադրանք էր: Ամոթալի միջադեպ էր:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՆՉ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՁԳՈՒՇԱՑՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ. ԻՆՉ ՏՎԵԼ ԵՄ, ԿԱՐՈՂ ԵՄ ՎԵՐՑՆԵԼ

ՍԵՑ

Տիկոլ Փաշինյանի՝ Ռուսաստան աշխատանքային այցից առաջ ռուսական տարբեր լրատվամիջոցներ հրապարակեցին հոդվածներ՝ «Ինչ է արել Ռուսաստանը Հայաստանի համար» ընդհանուր վերնագրով: Դրանցում մանրամասն տեղեկություններ էին, թե անցած 200 տարվա ընթացքում ինչ ներդրում են ունեցել Ռուսական կայսրությունը եւ Խորհրդային Միությունը հայ ժողովրդի եւ Հայաստանի պետականության վերականգնման եւ զարգացման հարցում: Դատելով ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի եւ ՀՀ վարչապետ աշխատող Նիկոլ Փաշինյանի բանակցություններից հրապարակված որոշ տեղեկություններից՝ խոսակցությունը եւս ընթացել է այդ ուղղությամբ. Պուտինը Փաշինյանին հասկացրել է, որ այն, ինչ հիմա Փաշինյանը տնօրինում է, իր հորից կամ պապուց ժառանգություն չի ստացել, որ դա ստեղծվել է Ռուսաստանի աջակցությամբ, եւ Ռուսաստանը չի պատրաստվում որպես դիտորդ հետեւել, թե Փաշինյանն ինչպես է փորձում Հայաստանը հանձնել ԵՄ-ին, Թուրքիային, Ադրբեջանին՝ ամեն մեկին իր ախորժակի չափով: Ռուսաստանի իշխանությունները դրանով ուղերձ են հղում Հայաստանի իշխանությանը, նաեւ՝ հայ ժողովրդին, որ առանց Ռուսաստանի հովանավորության եւ աջակցության, ոչ միայն Հայաստանի Հանրապետությունը, այլեւ հայ ժողովուրդը, որպես հավաքական պետականաստեղծ ազգ, այս տարածքում կարող էին եւ գոյություն չունենալ: Ռուսական կողմն այդ տեղեկությունները հրապարակում է մանրակրկիտ պատրաստված գծապատկերների, գրաֆիկների, քարտեզների միջոցով, ինչը ցույց է տալիս, որ դրան նախապատրաստվել են բավականին երկար: Դրանցում ներկայացված որոշ տեղեկություններին արժե, որ ծանոթանան նաեւ մեր ընթերցողները, մանավանդ որ որոշ փաստեր ոչ միայն քարոզչական, այլ նաեւ տեղեկատվական նշանակություն ունեն:

Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը սկսվում է 1828 թվականից, երբ Ռուսաստանը Պարսկաստանից գրավեց Արեւելյան Հայաստանը՝ Երեւանի եւ Նախիջեւանի խանությունները միացվեցին Ռուսաստանին: Դրանից հետո Պարսկաստանի եւ Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայերը հնարավորություն ունեցան տեղափոխվել Ռուսաստանի կայսրության վերահսկողության տակ անցած տարածք: Նշվում է, որ մի քանի տարվա ընթացքում 100 հազար հայ տեղափոխվեց Ռուսաստան: Ռուսական կայսրության պաշտպանության տակ անցած հայերի թիվը 60 տարում ավելացավ 4,5 անգամ՝ եթե 1830-ականների կեսերին 111 հազար 382 հայ էր ապրում, ապա 1897-ին՝ արդեն 516 հազար 806, իսկ 1990-ին՝ 3,5 միլիոնից ավելի: 1922 թվականին ձեւավորվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, որը 1922-ին մտավ Անդրկովկասյան ՍՍՀ կազմի մեջ, որը 1936 թվականին լուծարվեց, եւ ՀԽՍՀ-ն դարձավ ինքնուրույն միավոր: Խորհրդային Միության գոյության տարիներին են ստեղծվել Հայաստանի 27 քաղաքներից 21-ը. 1828 թ.՝ Վանաձորը, 1837թ.՝ Գյումրին, 1850թ.՝ Գավառը, 1870թ.՝ Գորիսը, 1923թ.՝ Ստեփանավանը, 1938թ.՝ Ալավերդին, 1938թ.՝ Կապանը, 1939թ.՝ Արարատը, 1945թ.՝ Արթիկը, 1947թ.՝ Արմավիրը, 1947թ.՝ Չարենցավանը, 1950թ.՝ Մասիսը, 1951թ.՝ Դիլիջանը, 1959թ.՝ Հրազդանը, 1960թ.՝ Սպիտակը, 1961թ.՝ Սեւանը, 1961թ.՝ Իջեւանը, 1962 թ.՝ Արտաշատը, 1963թ.՝ Աշտարակը, 1963թ.՝ Աբովյանը, 1964թ.՝ Սիսիանը: Միայն Խորհրդային Հայաստանի գոյության շրջանում Երեւանի վարչական տարածքն ընդլայնվել է 5 անգամ, իսկ 1981-ին կառուցվել է Երեւանի մետրոպոլիտենը:

Նշվում է, որ Խորհրդային Միությունը բազմամիլիարդանոց ներդրումներ է արել Հայաստանի տնտեսության մեջ, կառուցվել է 362 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն: Համեմատում են, որ եթե 1986 թվականին Խորհրդային Հայաստանում միջին աշխատավարձը կազմել է մոտ 623 դոլար, ապա 2021-ին՝ ընդամենը 388 դոլար: Ասվում է, որ ԽՍՀՄ տարիներին են կառուցվել Հայաստանի 20 խոշոր եւ միջին հզորության էլեկտրակայանները, Մեծամորի ատոմակայանը, ջերմակայաններ եւ հիդրոէլեկտրակայաններ, որոնք այսօր էլ ապահովում են Հայաստանի էներգետիկ պահանջները: Համեմատության համար ասվում է, որ ԽՍՀ-ում ավելի շատ էլեկտրաէներգիա էր արտադրվում, քան Իտալիայում, իսկ մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի քանակով Հայաստանը 10 անգամ ավելի շատ էլեկտրաէներգիա էր արտադրում, քան Թուրքիան, եւ 13 անգամ ավելի շատ, քան Իրանը: ԽՍՀՄ տարիներին են կառուցվել «Զվարթնոց» եւ Գյումրու միջազգային օդանավակայանները:

1897 թվականի տվյալներով, Հայաստանում գրագետ էր բնակչության 9,2 տոկոսը, իսկ 1980-ականներին՝ 99,9 տոկոսը: 1917 թվականի Հայաստանում գործել է միայն մեկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն՝ 131 ուսանողով, իսկ ԽՍՀՄ տարիներին հիմնվել է 95 պրոֆտեխուսումնարան՝ 30,6 հազար սովորողով, 65 միջին մասնագիտական ուսհաստատություն՝ 47,1 հազար, 13 բուհ՝ 57,9 հազար սովորողով: 1943-ին հիմնվել է Հայաստանի գիտությունների ակադեմիան, 1988-89 թվականներին գործել է 1371 դպրոց՝ 592 հազար դպրոցականներով: Մինչեւ 1990 թվականը կառուցվել եւ գործել է 1400 հանրային գրադարան:

Համեմատություն է անցկացվում ՀԽՍՀ եւ Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ ցույց տալու, որ հայերն անհամեմատ ավելի բարեկեցիկ կյանքով են ապրել, քան ռուսաստանցիները: Մեկ մարդուն ընկնող միջին խնայողությունը Ռուսաստանում կազմել է 1354 ռուբլի, Հայաստանում՝ 1868 ռուբլի, Ռուսաստանում բնակարանի միջին մակերեսը եղել է 53,1 քմ, Հայաստանում՝ 85,1 քմ, Ռուսաստանում 10 հազար մարդու հաշվով գործել է հանրային սննդի 12 օբյեկտ, Հայաստանում՝ 17, 100 ընտանիքի հաշվով Ռուսաստանում եղել է 16 անձնական օգտագործման ավտոմեքենա, Հայաստանում՝ 33: Կյանքի միջին տեւողությունը Ռուսաստանում 1979-80 թթ. եղել է 67,5 տարի, Հայաստանում՝ 72,8 տարի, բնակչության աճը Ռուսաստանում 1000 մարդու հաշվով կազմել է 5,9, Հայաստանում՝ 17,7: Համեմատություն է անցկացվում մեկ շնչին ընկնող արտադրության եւ սպառման ծավալների միջեւ: Եթե Ռուսաստանում մեկ մարդուն ընկնող արտադրությունը կազմել է համադրելի թվերով՝ 17,5 հազար դոլար, սպառումը՝ 11,8 հազար դոլար, 5,7 հազար դոլար բացասական բալանսով, Հայաստանում մեկ շնչին ընկնող արտադրությունը կազմել է 9,5 հազար դոլար, սպառումը՝ 29,5 հազար դոլար՝ 20 հազար դոլար դրական բալանսով: Ներկայացվում են տեղեկություններ նաեւ Հայաստանի անկախացման շրջանում միջպետական հարաբերություններից: Նշվում է, որ Ռուսաստանը Հայաստանի տնտեսությանում ամենաշատ ներդրումներ կատարած երկիրն է՝ 2,2 միլիարդ դոլար ծավալով, որը կազմում է բոլոր օտարերկրյա ներդրումների 40 տոկոսը, Ռուսաստանն արտոնյալ գներով Հայաստան է մատակարարում էներգակիրներ եւ հումք:



Հարցն այն չէ, թե որքանով է այս ամենը ճիշտ կամ մեղադրանքն արդարացի, հարցն այն է, թե ինչու է Ռուսաստանի պաշտոնական քարոզչությունը Փաշինյանի ժամանակ տարածում այս տեղեկությունը: Թերեւս միայն մի նպատակով՝ հասկացնելու, որ այն, ինչ ստեղծվել է մեր օգնությամբ, երբեմն՝ մեր զոհողությունների հաշվին, մենք չենք կարող թույլ տալ, որ դուք հանձնեք ուրիշին: Եթե դուք չգիտեք դրա արժեքը, մենք հաստատ գիտենք:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՆՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՁԵՎԱՉԱՓԸ

«Դրապարակի» զրուցակիցն «Ապրելու երկիր» կուսակցության նախագահ **Մանե Թանդիլյանն** է:

- Առաջիկա ընտրություններին մասնակցող միակ ուժը, որը մի քանի անգամ ընտրություններով հաղթել է ՔՊ-ին, «Ապրելու երկիրն» է. Փարաքար, Նոյեմբերյան, Ալավերդի, Տաթեւ: Պատրաստ եք զարգացնել այս հաջողությունը, այս քաղաքական «ժառանգությունն» ավելի մեծ պատասխանատվություն չի՞ առաջադրում ձեր թիմին:

- Այո՛, մեր թիմի պատասխանատվությունը մեծ է: Բայց հստակ արձանագրենք՝ մենք ոչ միայն չենք վախենում այդ պատասխանատվությունից, այլեւ ապացուցել ենք, որ կարող ենք այն կրել: Ձեր նշած համայնքներում մեր հաղթանակը դրա ամենացայտուն օրինակն է. ընտրություններից հետո անմիջապես անցել ենք գործի՝ տարբեր ոլորտներում գրանցելով դրական արդյունք: Մենք հաշվետու ենք ժողովրդին եւ դա ապացուցում ենք՝ պարբերաբար ու բաց հաշվետվությամբ:

- Հունիսի 7-ին կայանալիք ԱԺ ընտրություններին ընդառաջ, ինչպես ասում են՝ հայտնի ֆավորիտները, այդ թվում՝ ՔՊ-ն, լծվել են ակտիվ աշխատանքի. մարզերում գրասենյակներ են բացում, հանդիպումներ ունենում, քարոզարշավ վարում: Դուք, կարծես, դեռ նախընտրական «հետախուզական» դիրքերում եք. ինչո՞վ է պայմանավորված ձեր ուժի հարաբերական պասիվությունը:

- Ես բազմիցս հայտարարել եմ՝ մեր մասնակցությունն ընտրություններին ինքնանպատակ չպետք է լինի: Մենք գնում ենք ընտրությունների միայն արդյունք ապահովելու համար: Հենց այդ պատճառով տարբեր հանդիպումների եւ բանակցությունների միջոցով հետեւողականորեն ձեւավորում ենք այն լավագույն ձեւաչափը, որով կմասնակցենք առաջիկա խորհրդարանական ընտրություններին:

- Ե՞րբ սպասենք «Ապրելու երկրի» ակտիվ մուտքին նախընտրական մրցապայքար, ի՞նչ կերպ կազդարարվի դա:

- Շարունակելով իմ նախորդ միտքը՝ հավելեմ, որ մեր թիմի վերջնական որոշման մասին հաղորությունը կտեղեկացվի շատ շուտով:

- Այս օրերին ձեւավորվել են ընտրություններին մասնակից քաղաքական ուժերի դաշինքներ: Դուք վերջնականապես որոշվե՞լ եք գոնե ձեր մասնակցության ձեւաչափը. ինքնուրույնաբա՞ր, մենա՞կ, թե՞ դաշինքով:

- Թե ինչ ձեւաչափով կմասնակցենք՝ ինքնուրույն, թե դաշինքով, որոշվելու է միայն մեկ չափանիշով՝ որն է առավել արդյունավետ:

- Իսկ ի՞նչ գլխավոր ուղերձներով եք գնալու ընտրողի մոտ, որպեսզի նա հավատա, թե հենց դուք եք ի զորու՝ երկիրն իրապես ապրեցնելու, զարգացնելու:

- Մենք մեր քաղաքացիների մոտ գնալու ենք հստակ նպատակներով. ապահովել հուսալի անվտանգություն եւ դիմակայուն պետություն, կառուցել մրցունակ եւ նորարար տնտեսություն, դարձնել մեր երկիրը կամուրջ, ոչ թե փակուղի, բարձրացնել կյանքի որակը, ապահովել բարեկեցություն եւ զարգացնել մարդկային կապիտալը: Արդյունքում՝ քաղաքացին կզգա, որ ինքն է վերահսկում իր ապագան, լինելով հայ՝ սեփական ընտրությամբ, պահպանելով հայկական ինքնությունը եւ արժեքները: Սա մեր հիմնական ուղերձն է, որը հիմնված է ոչ միայն խոստումների, այլեւ իրական արդյունք ապահովելու ունակության վրա:

Արա ԱԼՈՅԱՆ

ՔՈՒԵՋ

ԿԳՄՍ նախարարությունը հայտարարել էր մրցույթ՝ «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար: Մրցույթը պետք է կայանար մարտի 31-ին, սակայն չի կայացել: Մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ Արմինե Կոլյանը եւ նախկին գյուղքոլեջի տնօրենի պաշտոնակատար Աննա Տոռոզյանը: Հիշեցնենք. ԿԳՄՍ նախարարի հրամանով Գորիսի պետական քոլեջը եւ Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան գյուղատնտեսական պետական քոլեջը միավորվեցին: Գորիսի պետական քոլեջի՝ տնօրեն Կարեն Լազարյանին աշխատանքից ազատելուց հետո քոլեջի 30 աշխատակիցներ աշխատանքից ազատման դիմումներ էին գրել եւ հեռացել, Գորիսի պետական քոլեջում դասապրոցեսը խաթարված էր: Իսկ նորանշանակ ԺՊ Արմինե Կոլյանն աշխատանքի էր գնում ոստիկանների ուղեկցությամբ: Մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել նաեւ Գորիսի քոլեջի նախկին տնօրեն Կարեն Լազարյանը, սակայն կառավարման խորհուրդը հայտը մերժել է՝ պատճառաբանելով, որ փաստաթղթերում հավաստագիրը ներկայացված չի եղել:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԼՍԵՑԻ, ՈՐ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԻ ՍՐՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԵՄ

Էջը՝ Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

Կարեն Լազարյանը մեզ ասաց. «Հավաստագրի հետ կապված՝ կա դատական վեճ, մինչեւ դատարանի օրինական վճիռն ուժի մեջ չմտնի, ոչ մեկը չի կարող ասել՝ հավաստագիր ունեմ, թե՞ ոչ»: **Աննա Տոռոզյանը** մեզ ասաց, որ մրցույթը չի կայացել, որովհետեւ ԿԳՄՍՆ ներկայացուցիչը չի ներկայացել. «Չէր ներկայացել նաեւ կառավարման խորհրդի՝ նախարարության կողմից ներկայացված անդամը: Թե ինչու չէին ներկայացել, պատճառը, բնականաբար, խորհրդում չհնչեց: Եթե ներկայացուցիչը չի ներկայանում, նիստը հետաձգվում է 5 օրով: Ապրիլի 6-ին, ժամը 2-ին նորից մրցույթ կլինի»: Կարծում եք՝ արդա՞ր կլինի, ի՞նչ ակնկալիքներ ունեք մրցույթից: «Ճիշտն ասած, ես ակնկալում եմ այնպես, որ մեր երկրում ընտրություններն արդար են եւ թափանցիկ, եւ այդ նպատակով էլ իմ թեկնածությունն առաջադրել եմ: Որպես հավակնորդ, հանդես եմ եկել միայն ու միայն այդ ակնկալիքով, որ պետք է լինեն թափանցիկ ու արդար ընտրություններ: 2024 թ. մարտի 1-ին ինձ շնորհվել է ՄԿՈՒ ոլորտը ղեկավարելու հավաստագիր, եւ արդեն այս ոլորտում ունեմ 16 տարվա աշխատանքային փորձ եւ վերջին 10 տարվա կառավարման փորձ: Նաեւ 2023-ից հանդիսացել եմ տնօրենի պարտականությունները կատարող՝ Գորիսի նախարարի հրամանով Գորիսի պետական քոլեջը եւ Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան գյուղատնտեսական պետական քոլեջը միավորվեցին: Գորիսի պետական քոլեջի՝ տնօրեն Կարեն Լազարյանին աշխատանքից ազատելուց հետո քոլեջի 30 աշխատակիցներ աշխատանքից ազատման դիմումներ էին գրել եւ հեռացել, Գորիսի պետական քոլեջում դասապրոցեսը խաթարված էր: Իսկ նորանշանակ ԺՊ Արմինե Կոլյանն աշխատանքի էր գնում ոստիկանների ուղեկցությամբ: Մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել նաեւ Գորիսի քոլեջի նախկին տնօրեն Կարեն Լազարյանը, սակայն կառավարման խորհուրդը հայտը մերժել է՝ պատճառաբանելով, որ փաստաթղթերում հավաստագիրը ներկայացված չի եղել:

Նա ասաց նաեւ, որ ԿԳՄՍՆ ներկայացուցիչը մրցույթին չի մասնակցել, որովհետեւ առողջական խնդիրներ է ունեցել: Մենք հետաքրքրվեցինք. Դատալեքսում նշված է, որ Ձեր դեմ դատական հայց է ներկայացվել առ այն, որ Ձեր հավաստագիրը կեղծ է, ի՞նչ կասեք այս մասին: «Ես տեղյակ չեմ այդ պրոցեսից, չի կարող իմ հավաստագիրը լինել կեղծ, քանի որ ես 30 տարվա մանկավարժական գործունեություն ունեմ ու տարբեր փուլերում գրանցել եմ բավական լուրջ ու մեծ հաջողություններ՝ իմ գյուղքոլեջում, մինչեւ 2025 թ. դեկտեմբերի 4-ը»:

Եթե տնօրենի 2 թեկնածուները հաղթահարեն մրցույթի փուլերը, սակայն նախարարությունը նախապատվությունը տա քոլեջի տնօրենի ԺՊ Արմինե Կոլյանին, քանի որ հենց նա է ԿԳՄՍ նախարարի սրտի թեկնածուն, ինչպե՞ս եք պատկերացնում Ձեր ակնկալած արդարությունը: «Չեմ կարող եզրակացություն անել, պետք է անաչառ լինի կառավարման խորհրդի կազմը, եւ իրականացնեն ճիշտ ընտրություն՝ հաշվի առնելով մարդու անցած ուղին, աշխատանքային փորձը, կառավարման փորձը, զարգացման ծրագիրը, որը նաեւ կարեւոր կետ է: Պետք է նշեմ, որ զարգացման ծրագիրը մշակելու համար դիմել եմ Գորիսի բազմագործառութային պետական քոլեջի ԺՊ-ին, բնականաբար՝ դիմումով, որպեսզի մշակեմ իմ զարգացման ծրագիրը, եւ ստացել եմ ոչ տեղին եւ համապատասխան տեղեկատվություն: Բնականաբար, իմ աշխատանքային ուղին, իմ մասնագիտական փորձը թույլ են տվել, որ ես ստեղծեմ իմ զարգացման ծրագիրը, իսկ ԺՊ-ի կողմից տրված տեղեկատվությունը բացարձակ չի համապատասխանել այն կետի պահանջներին, ինչն իրականում գաղտնիք չէր պարունակում՝ զարգացման ծրագիրը կազմելու համար: Որպես տեղեկատվություն՝ ինձ փոխանցել են նախկին քոլեջների կառուցվածքը, որն ինձ պետք չէր, քանի որ այդ քոլեջները միավորվել են, եւ հիմա ունենք Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ»:

Արմինե Կոլյանը մեզ ասաց նաեւ, որ ԿԳՄՍՆ ներկայացուցիչը մրցույթին չի մասնակցել, որովհետեւ առողջական խնդիրներ է ունեցել: Մենք հետաքրքրվեցինք. Դատալեքսում նշված է, որ Ձեր դեմ դատական հայց է ներկայացվել առ այն, որ Ձեր հավաստագիրը կեղծ է, ի՞նչ կասեք այս մասին: «Ես տեղյակ չեմ այդ պրոցեսից, չի կարող իմ հավաստագիրը լինել կեղծ, քանի որ ես 30 տարվա մանկավարժական գործունեություն ունեմ ու տարբեր փուլերում գրանցել եմ բավական լուրջ ու մեծ հաջողություններ՝ իմ խելքի, իմ ունակությունների շնորհիվ: Մինչեւ ՄԿՈՒ-ի հավաստագիր ստանալը, ունեի նաեւ հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի հավաստագիր, այսինքն՝ ես հավակնում էի նաեւ դպրոցի տնօրենի պաշտոնին, բայց որեւէ տեղ չփորձեցի: Ինձ համար որեւէ դժվարություն չէր ներկայացնում նորից քննություն անցնելը: Մասնակցել եմ դասընթացներին եւ բոլոր օրենքները ես գիտեի, 2 ամսվա ընթացքում խորքային ուսումնասիրել եմ ՄԿՈՒ-ի օրենքը, ու ինձ համար որեւէ խնդիր չկար՝ այդ քննությունը հանձնելու: Դա կեղծ տեղեկատվություն է, բանսարկությամբ են զբաղված: Ես հիմա ժամանակ չունեմ, որ նման զրպարտության համար դատական հայց ներկայացնեմ: Տարեկան հազարավոր մարդիկ են հավաստագրվում, ու ես, որպես ֆիզիկական անձ, հավաստագրվել եմ: Կոնկրետ ինձ ինչո՞ւ պետք է հետաքրքիր լինի այս կամ այն մարդու հավաստագրի կեղծ կամ իրական լինելը, դա աբսուրդի ժանրից է: Հավաստագիրը ստացել եմ 2025 թ. սեպտեմբերի 16-ին»:

Տնօրենի ԺՊ **Արմինե Կոլյանին** հարցրինք՝ մրցույթին մասնակցող Աննա Տոռոզյանն ասում է, որ զարգացման ծրագիր կազմելու համար անհրաժեշտ ինֆորմացիան չեք տրամադրել իրեն, ինչո՞ւ: «Ես տրամադրել եմ այն՝ կարգի եւ կետի համաձայն»: Ապա մանրամասն պատմեց, թե ինչ կառուցվածք է ունենալու նոր ձեւավորված քոլեջը, եւ ինչու այդ փաստաթղթերը չեն տրամադրվել թեկնածուին, բայց նաեւ հայտարարեց, որ ինչ ասում է, չհրապարակենք, որովհետեւ ինքը ոչ մի ԶԼՄ-ի տեղեկատվություն չի տրամադրում, քանի որ անհիմաստ է համարում մտնել մրցակցության դաշտ, «որովհետեւ, եթե ես հարցազրույց տամ որեւէ լրատվականի, նշանակում է՝ կիջնեմ իրենց մակարդակին», իսկ ինքն իմաստ չի տեսնում, պայքար չի մղում:

- Եթե իմաստ չեք տեսնում եւ պայքար չեք մղում, հավանաբար, հստակ գիտեք, որ Ձեզ են տնօրեն նշանակելու: Ի՞նչ ակնկալիք ունեք այս մրցույթից, Դո՞ւք եք նախարարի սրտի թեկնածուն:

- Ես ինձ որեւէ մեկի սրտի թեկնածու չեմ համարում: Ես ուզում եմ, որ ամեն ինչ արդար լինի: 30 տարի սերունդ եմ կրթում, իմ սաներին քարոզել, քարոզում եմ՝ լինել արդար, մարդկային, ամեն իրավիճակում մարդ մնալ. դա իմ սկզբունքն է: Ինձ համար սա աբսուրդ զրույց է, երբ առաջին անգամ ԶԼՄ-ից լսեցի, որ ես որեւէ մեկի սրտի թեկնածուն եմ, ես շատ զարմացել եմ, սա իրականության հետ որեւէ աղերս չունի:

- Եթե նախարարի սրտի թեկնածուն չեք, ինչո՞ւ էիք ոստիկանների ուղեկցությամբ հաճախում քոլեջ:

- Նախ ասեմ, որ ոստիկանների հետ որեւէ առնչություն չեմ ունեցել, ես գնացել եմ այնտեղ, տեսել եմ, որ իրենք արդեն այդ շենքի մոտ են: Ասել եմ՝ ի՞նչ եք անում այստեղ: Ոստիկաններն ասացին, որ լայվով իրենց իմաց են տվել, որ ցույցեր են քոլեջում, նրանք էլ եկել են, որ կարգ պահեն: Ես որեւէ ոստիկանի դիմելու կամ որեւէ միջամտության կարիք չունեի:

ԱՅՍՈՒՀԵՏ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՄՆԱՑԱԾ ՀԱՐՑԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԵՆՔ

ՔՊ-ական պատգամավոր Լիլիթ Ստեփանյանին չհաջողվեց լինել ՔՊ նախընտրական ցուցակի առաջին փուլի 50-յակում՝ նա ընդամենը 186 ձայն էր ստացել ՔՊ ներքին քվեարկության ժամանակ: Բայց 50-յակում է հայտնվել Ստեփանյանի հովանավորը՝ Սասուն Միքայելյանը, որին հաջորդ ԱԺ-ում հնարավոր է նորից տեսնենք: ՔՊ-ական պատգամավորուհին, սակայն, շատ ակտիվ էր սոցցանցերում, հատկապես՝ Փաշինյանի հակաեկեղեցական պայքարի ջատագովներից էր եւ ամեն ինչ արեց՝ դարձյալ ԱԺ-ում հայտնվելու համար: Նա ԱԺ-ում հեգնական տոնով ելույթներ էր ունենում, ընդդիմադիրներին քարկոծում, Վեհափառին էր փնովում, գրում էր, որ Սերժ Սարգսյանն ու Ռոբերտ Քոչարյանն արժանացել են «չարորակ ուռուցք» գնահատականին եւ իրենց «մետաստազներով» փորձում են նվաճել Հայաստանը: «Եղանակի տաքացմանը զուգահեռ, Հայաստանում դարձյալ ակտիվացել են «փրկիչները»: Այս անգամ ջոկատով են փրկելու Հայաստանն ու հայ ժողովրդին: Այնինչ, Հայաստանն ու հայ ժողովրդին պետք է փրկել միայն նրանցից»,- գրում է Լիլիթ Ստեփանյանը:

Նա նաեւ հարցազրույցներ է տալիս իշխանական լրատվամիջոցներին, բայց խուսափում է մեր հարցերին պատասխանելուց: Մի քանի հարց էինք ուղղել Լիլիթ Ստեփանյանին: Հավանաբար, նրա քիմքին հաճելի չէին այդ հարցերը, քանի որ կարդալուց հետո հայտարարեց, որ չի կարող մեր հարցերին պատասխանել: Ուստի հրապարակավ կներկայացնենք այդ հարցերը, գուցե այդ դեպքում ցանկություն առաջանա պատասխանելու, քանի որ ինքն էլ, ես էլ Հրազդան քաղաքի բնակիչներ ենք:

Հարցերը հետեւյալն են.

1. Դուք եղել եք Արցախում, հավանաբար՝ նաեւ Շուշիում, մինչեւ Ձեր իշխանության կողմից Արցախը հանձնելը, Արցախն արժե՞ք էր Ձեզ համար, Շուշին դժբախտ ու դժգույն քաղա՞ք էր:

2. Դուք երբեւէ կմոռանա՞ք 1915 թվականին թուրքերի իրականացրած Հայոց ցեղասպանությունը, թե՞ Նիկոլ Փաշինյանի նման, Դուք էլ եք կասկածի տակ դնում ցեղասպանության հարցը:

3. Դուք Եկեղեցու դեմ պայքարի առաջամարտիկներից եք, հանդես եք գալիս տարբեր գրառումներով: Հասկանում ենք, որ ուզում եք հաճոյանալ Նիկոլ Փաշինյանին, բայց պատկերացրեք մի պահ, որ ընտրություններից հետո դուք այլեւս իշխանություն չեք՝ կզղջա՞ք, կապաշխարե՞ք, որ դեմ եք գնացել Եկեղեցուն եւ Վեհափառին:

4. Ձեր իշխանության օրոք կորցրինք Արցախը, «Հայոց պատմությունը» «Հայաստանի պատմություն» դարձավ, անգամ Այբբենարանից հանվեց Մեսրոպ Մաշտոցի նկարը, ՀՀ մուտքի ու ելքի սահմանահատման կնիքի վրայից հանվեց Արարատ լեռան պատկերը, «Արցախ» տերմինն օգտագործելու համար պաշտոնյա է ազատվում աշխատանքից: Կնշե՞ք մի քանի փաստ, թե հրազդանցին ինչի համար պետք է հունիսի 7-ին իր ձայնը տա Ձեզ եւ Ձեր կուսակցությանը:

ԵՍ ՀԻՄԱ ՉԵՄ ԿԱՐՈՂ ՄՏԱԾԵԼ ԱՐՑԱԽ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ, ԵԹԵ ԱՌԱՋՆԱՅԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՆԵՆԱԼ-ՉՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՑՆ Է

*Հարցազրույց արցախցի բանաստեղծ **Հերմինե Ավագյանի** հետ*

- Օրեր առաջ լույս տեսավ Արցախի մասին հայերեն եւ ֆրանսերեն լեզուներով պատմող «Նամակներ դրախտից, որտեղ ոչ ոք չկա» վերնագրով գիրքդ: Ինչի՞ մասին է այն, ովքե՞ր էին նախաձեռնել այդ «գրական կամուրջը»:

- Երբ 2022թ. ազերի կեղծ բնապահպանները փակեցին Հակարիի կամուրջը, ես Երեւանում էի, եւ ամբողջ շրջափակման ժամանակ հնարավոր չեղավ վերադառնալ Արցախ: Այդ ժամանակ զանգ ստացա Արցախի մշակույթի նախարար Նարինե Աղաբալյանից: Ասաց, որ Արցախ-Ֆրանսիա երկխոսության ծրագիր կա, որ հենց ֆրանսիացիներն են նախաձեռնել՝ գրողներ, մշակույթի գործիչներ, ովքեր հետաքրքրված են Արցախի հարցով: Զեւաչափն այն էր, որ Արցախից մի գրող եւ Ֆրանսիայից մի գրող կամ արվեստագետ նամակներ գրեն իրար: Նպատակն էր, որ արցախցի գրողն այդ միջոցով պատմի Արցախի մասին: Եվ ասաց, որ Արցախում որոշել ենք, որ այդ գրողը դու լինես: Արդեն 2023թ. ապրիլին ստացա առաջին նամակը Փարիզից: Ինձ գրում էր երաժիշտ-երգահան, փիլիսոփայության դոկտոր՝ Ուլիս Մանես անունով մեկը: Առաջին նամակում ինձ հարց տվեց՝ կարո՞ղ ես Արցախի մասին պատմել քո մանկությամբ: Եվ ես Ուլիսին պատմեցի իմ մանկության մասին, որ անքակտելիորեն կապված էր արցախյան առաջին պատերազմի հետ: Ես մտածում էի, թե ինչ եմ գրելու ֆրանսիացուն: Արդյո՞ք կհասկանար, որ այդպիսի մանկություններ էլ են լինում աշխարհում. եթե պատմեմ այնպես, ինչպես իրականում կար, այդպես ցավը շատ կլիներ: Ու որոշեցի պատմել այն երազանքների մասին, որ ունենում են երեխաները, որովհետեւ Արցախում ապրող երեխաները, ինչպես առաջին պատերազմի ժամանակ եւ հետո, ինչպես 44-օրյա պատերազմի եւ շրջափակման ժամանակ, ունեին նույն երազանքները, որ ունենում են աշխարհի տարբեր երկրներում ապրող երեխաները: Մենք ուզում էինք ուղղակի հանգիստ խաղալ մեր բակում եւ չտեսնել, որ ինքնաթիռներ են երեւում երկնքում, չվախենալ, որ հիմա ռումբեր կպայթեն, եւ խաղը կավարտվի: Մենք ուզում էինք խաղալիքներ ունենալ, չէինք ուզում խրամատներ սարքել հողից կամ փայտից ատրճանակներ եւ դրանցով խաղալ, մենք ուզում էինք նորմալ խաղալիքներ ունենալ, մենք ուզում էինք կոնֆետներ եւ պաղպաղակներ ունենալ, որ չկային խանութներում: Մենք ուզում էինք հայրիկ եւ մայրիկ ունենալ: Այս էի պատմում Ուլիսին, որ այն, ինչ մենք ուզում էինք, մեծ բան չէր, որ փոքրիկ, բայց կարեւոր մանկական երազանքներ էին, որ ոչ մի բանով չէին տարբերվում աշխարհի բոլոր երեխաների երազանքներից:

Երբ փոքր էի, մորս ասում էի՝ լավ բան եմ ուզում, մայրս հարցնում էր՝ ի՞նչ լավ բան, ի՞նչ է այդ լավ բանի անունը, ասում էի՝ չգիտեմ, բայց լավ բան եմ ուզում: Մի օր էլ մայրս ասաց՝ հայրդ, որին ես գրեթե չեմ հիշում, այն վերջին գիշերը, երբ գնաց, քեզ ասաց՝ գնում եմ այդ լավ բանը բերելու: Ես Ուլիսին պատմեցի այդ լավ բանի մասին, որը խաղաղությունն է եւ ազատ ապրելու երազանքը: Նաեւ պատմեցի, որ 1995-ին Ամերիկայից մի աղջիկ եկավ մեր գյուղ, իր հետ շոկոլադ էր բերել, եկավ մեր տուն՝ մեզ հետ ծանոթանալու, որովհետեւ ասել էին՝ գյուղի հրամանատարի տունն է, որը զոհվել է: Նա պայուսակից հանեց շոկոլադը, տվեց ինձ: Ես չգիտեի՝ ինչ պետք է անեմ: Հարցրի՝ ի՞նչ է սա, ասաց՝ շոկոլադ է: Ես հարցրի՝ շոկոլադն ի՞նչ է: Ինքն արտասվեց: Մայրս ասաց, որ այստեղ ոչ մի երեխա չգիտի, թե շոկոլադն ինչ է: Ես ուրիշ շատ բաների մասին պատմեցի. սա մի գրական ճամփորդություն էր, որի միջոցով Ուլիսի համար բացահայտվեց Արցախը: Նամակագրության նախաձեռնողները շատ տպավորված էին եւ ասացին՝ մենք չէիք մտածել, որ սա գիրք կդառնա, բայց եւ չի կարող գիրք չդառնալ: Քանի որ «Նյումեգն» է հրատարակում իմ գրքերը, առաջարկեց այս գիրքը եւս հրատարակել: Գիրքը՝ «Նամակներ դրախտից, որտեղ ոչ ոք չկա», հայերեն եւ ֆրանսերեն է, նաեւ իմ բանաստեղծությունները կան վերջում, որոնք նամակների հետ ուղարկել էի Ուլիսին: Գրքի հիմնական թարգմանիչը Լիլիթ Բլեյանն է, նաեւ՝ Հովհաննես Գեւորգյանը եւ Անի Չաքմիշյանը, խմբագիրը Վահագն Աթաբեկյանն է, վերնագիրը նույնպես իր առաջարկով է ընտրվել: Ես գրում էի հայերեն, ուղարկում Ֆրանսիայում Արցախի ներկայացուցիչ Հովհաննես Գեւորգյանին, որը թարգմանում էր ֆրանսերեն եւ հետո Ուլիսի նամակն էր թարգմանում հայերեն՝ ուղարկում ինձ: Ես բոլոր նամակները ստորագրում էի իմ ինքնության հասցեով. Հերմինե Ավագյան, Արցախ, Մարտունու շրջան, գյուղ Աշան. սա իմ դրախտի հասցեն է:

- Այդ դրախտը, որտեղ մարդիկ էին ապրում, հանրապետություն էր՝ թեպետ չճանաչված, արդյո՞ք իրավունք ուներ մեկ հոգին, թեկուզ ՀՀ վարչապետը, ինքնագլուխ եւ կամայական որոշում կայացնել՝ Արցախը ճանաչելով Ադրբեջանի կազմում:

- Առաջինը, որ ինձ սովորեցրել են իմ ծնողները, «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունն է եղել: Ասել են, որ դա քո հայրենիքի մասին է: Հարցրել եմ՝ իմ հայրենիքն Արցախը չէ՞: Պատասխանել են՝ Արցախն իմ ծննդավայրն է, իսկ իմ հայրենիքը Հայաստանն է, եւ Արցախն էլ Հայաստան է: Ես եւ իմ սերունդն այդպես ենք մեծացել: Կապ չունի, թե երեկ ով էր իշխանության եւ այսօր ով է: Ոչ մի իշխանություն չի կարող ինձ համոզել, որ ես փախստական եմ իմ հայրենիքում: Ես գիտեմ, որ որոշ շրջանակներում արգելված է Արցախ ասելը, որ դրա համար մարդիկ կարող են պատժվել, զրկվել աշխատանքից, բայց դա չի կարող պատճառ լինել, որ ես ինձ այստեղ պատանդ զգամ: Որովհետեւ իշխանություններն անցողիկ են. հավերժ են միայն հայրենիքները: Երբ այսօր ինձ ասում են՝ ընդունիր Հայաստանի քաղաքացիություն, ես ասում եմ՝ չեմ ընդունելու: Ինչո՞ւ, ես ո՞վ եմ, Հայաստանի քաղաքացի չե՞մ: Ես իմ անձնագիրը չեմ փոխելու, որովհետեւ Արցախում ստացած իմ անձնագրի վրա գրված է՝ Հայաստանի Հանրապետություն: Սկզբունքորեն չեմ փոխելու, որովհետեւ ես ինձ զգում եմ ՀՀ քաղաքացի: Եվ ով ուզում է լինի իշխանությունը, նա ո՛չ իրավունք ունի իմ փոխարեն որոշում ընդունել, ո՛չ էլ իրավունք ունի ինձ ինչ-որ քարտեզ ցույց տալ՝ իր կրծքին խփած, եւ իմ երեխային կամ որեւէ մեկին համոզել, որ սա է քո իրական քարտեզը: Մենք գիտենք՝ որն է իրական քարտեզը, մենք գիտենք, որ այսօր ֆիզիկապես չենք կարող վերադառնալ Արցախ, բայց ոչ մեկը չի կարող մեզնից խլել այդ վերադարձի հանդեպ հավատը: Ոչ մեկը չի կարող ասել՝ սա է քարտեզն այսօր, եւ այսպես շարունակվելու է: Ես սա չեմ ընդունում, իմ երեխաներն էլ չեն ընդունելու: Իմ երեխաների համար Հայաստանն իրենց հայրենիքն է, եւ իրենք ինձ պես, չգիտեմ՝ երբ, բայց հավատում են, որ մի օր լինելու է այդ միացյալ Հայաստանը: Ոչ մեկը թող չփորձի մեզ ասել, որ դու փախստական ես քո հայրենիքում: Եվ որեւէ մեկը որեւէ մեկի փոխարեն իրավունք չունի որոշում կայացնել այս աշխարհում:

- Մեծ հնչեղություն ստացավ մետրոյի դեպքը, երբ Փաշինյանը հերոսի դստեր հետ զրուցելիս արցախցիներին անվանեց «փախածներ»: Դուք նույնպես զոհված հրամանատարի դուստր եք: Հնարավո՞ր է ավելի դառը բան ճաշակել երբեւէ:

- Նա, ում այդպես անվանեց, իմ հայրիկի մարտական ընկերոջ աղջիկն է: Նրա հայրն Արցախյան առաջին պատերազմում զոհված հրամանատար Մերուժան Մոսիյանն է: Այն ժամանակ, երբ մարդիկ դեռ հավատում էին, որ Մոսկվան խաղաղ ճանապարհով կլուծի Արցախի հարցը, հանրահավաքներ էին անում, Արմինեի հայրիկը եւ իմ հայրիկը նկուղներում զենք էին պատրաստում, ջոկատ էին հավաքում: Նրանք արդեն գիտեին, որ այդ հարցն առանց պատերազմի չի լուծվելու, եւ, ինչպես հայրս էր ասում, օդից վառոդի հոտ է գալիս: Երբ նայեցի այդ տեսանյութը, չգիտեի, թե ես ինչ կպատասխանեի նրան Արմինեի փոխարեն: Ինքը պարզապես իրավունք չունի խոսելու որեւէ հերոսի մասին, «փախած» անվանելու հերոսի աղջկան: Անվանել «փախած» մեկին, որի ամբողջ մանկությունն անցել է պատերազմի մեջ՝ ինչպես բոլորինս: Այստեղ հարցը միայն Արմինեն չէ, հարցն ամբողջ արցախահայությունն է, որ ստիպված է եղել բռնի կերպով դուրս գալ Արցախից: Որովհետեւ ուրիշ ճար չկար, եթե մնար, կցեղասպանվեր: Որովհետեւ մնացել էր մենակ, որովհետեւ բանակը զինաթափված էր, որովհետեւ ռուսների օգնության վրա հույս չկար, եւ կար ադրբեջանական սպառնալիքը՝ ցեղասպանելու: Դա ամեն օր բարձրախոսներով հնչեցնում էին բոլոր գյուղերում, գրական հայերենով սպառնում էին, որ դուրս գանք: Դուք կասկածո՞ւմ եք, որ իրենք ցեղասպանություն կանեին: Իսկ իրեն ես չեմ լսում արդեն, ես նեղանում եմ այն մարդկանցից, ովքեր իրեն հավատում են, ընդունում են իր ասածները եւ իրենք էլ արցախցիներին անվանում են փախածներ:

- Արցախը զոհաբերենք՝ Հայաստանը փրկելու համար: Մի քանի օր առաջ էլ ասաց՝ գիտակցաբար գնացել ենք զոհաբերության, որ անկախանանք: Գիտեմ, ահավոր ծանր է Ձեզ համար՝ լսել այդ դժոխային խոստովանությունը, եւ անասելի է այն մայրերի ցավը, որոնց զավակները զոհվել են: Այս իրողությունը կարո՞ղ ենք որեւէ կերպ մարդկային համարել:

- Հայաստանն Արցախի հետ ամբողջական օրգանիզմ է: Երբ որեւէ մեկը քո օրգանիզմից մի օրգան հատում է, մյուս օրգանները չեն կարող այդ օրգանի դերը կատարել, դու դառնում ես կիսատ մարդ: Իսկ Արցախը Հայաստանի ողնաշարն է, եւ պատահական չէ, որ ժամանակին Մոնթեն ասել է. եթե կորցնենք Արցախը, կշրջենք մեր պատմության վերջին էջը: Դա պաթոս չէ: Հիմա այդ ողնաշարը ջարդվել է: Իսկ այսօր խոսում են խաղաղության համաձայնագրերի մասին: Իհարկե, մենք՝ բոլորս, խաղաղություն ենք ուզում: Դուք գիտե՞ք մի հայ մարդու, որ պատերազմ է ուզում: Ես չգիտեմ: Բայց ի՞նչ խաղաղության մասին կարող է խոսք լինել, երբ այսօր Արցախում ցեղասպանությունը շարունակվում է, ոչնչացվում են մեր պատմամշակութային հուշարձանները, քրիստոնեական արժեքները, ջնջվում է հայկական հետքը: Դա մշակութային ցեղասպանություն է: Խաղաղություն եւ մշակութային ցեղասպանություն. կարծում եմ՝ դրանք հականիշներ են: Էթնիկ զտման մասին ոչ մի խոսք չի եղել, եւ հիմա էլ այդ ցեղասպանությունը շարունակվում է մշակույթի տեսքով: Ոչնչացվում է մեր պատմական հետքը աշխարհի եւ Հայաստանի իշխանությունների աչքի առաջ, եւ մենք խոսում ենք խաղաղության մասին: Այսօր Բաքվի բանտում շարունակում են մնալ հայ գերիներ, այդ թվում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունը, իսկ մենք խոսում ենք խաղաղության մասին: Խաղաղությունը բանտարկված է Բաքվի բանտում. ի՞նչ խաղաղության մասին է խոսքը: Այդ մարդիկ բանտում են, որովհետեւ Արցախի անցած անկախության ուղին են ներկայացնում: Փնտրեք խաղաղությունը Արցախում ոչնչացվող հուշարձանների մասին տեսանյութերում, որ հրապարակում են ադրբեջանցիները: Փնտրեք Բաքվի դատարաններից տրվող տեսանյութերում: Ես չեմ կարող ընկալել այդ խաղաղությունը. դա կեղծ ձեռքսեղմումների մեջ է: Բայց ես ուզում եմ արժանապատիվ խաղաղություն: Զոհաբերեցիք Արցախը, Հայաստանի կարեւոր ստրատեգիական դիրքերում նստած են ադրբեջանցիները. դուք կարծում եք՝ այսօր Հայաստանը շրջափակման մեջ չէ՞, այդքանից հետո ինձ ցույց տվեք այդ խաղաղությունը, ես չեմ տեսնում, ո՞ւր է:

- Ի՞նչ է զգում, մտածում Արցախից բռնագաղթած հայն այսօր:

- Ես այս պահին չեմ կարող մտածել Արցախ վերադարձի մասին, եթե առաջնայինը Հայաստան ունենալ-չունենալու հարցն է: Նախ պետք է Հայաստան ունենանք, այդ արժանապատիվ խաղաղությունն ունենանք, հետո մտածենք, թե ինչպես ենք Արցախ վերադառնում: Ես հիմա ուղղակի ուզում եմ Հայաստան ունենալ:

Հուսիկ Արա

ԴԱՌՆԱՆՔ ԶՕՂՈՐՄԻՆ ՏԻ ՏԱՆՔ ՄԵՐ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՆՑԱՎՈՐՆԵՐԻՆ

Շաբե ԱՎՈՅԱՆ

Այսօր մենք պետք է դառնանք ու շնորհակալություն հայտնենք գիտնական Էդիտա Գզոյանին, դառնանք զօղորմին տի տանք նրա անցավորներին, քանի որ գիտնականը, համենայնդեպս, հասցրեց Ջեյ Դի Վենսին նվիրել գիրք, որը հիմնված էր ԱՄՆ մամուլի նյութերի վրա եւ անդրադառնում էր հայերի նկատմամբ կիրառված բռնություններին ու ջարդերին Կովկասում, 1905-1921 թվականներին: Այդ թվերին հայերը ենթարկվել են ջարդերի ադրբեջանցիների կողմից, եւ այդ ցեղասպանական գործողությունների ծավալն այնպիսին էր, որ դա արձագանք է գտել ամերիկյան մամուլում:

Այդ գիրքը հայերի կողմից ներկայացվող փաստերի ժողովածու չէ. սա այն նյութերի հավաքածուն է, որոնք հրապարակվել են ԱՄՆ մամուլում, ամենայն հավանականությամբ, ամերիկյան փաստահավաքների, լրագրողների եւ պատմաբանների կողմից՝ ամերիկյան դիվանագետների տեսածի ու պատմածի հիման վրա, եւ դառնանք զօղորմի տի տանք բոլոր նրանց նախնիներին: Այսպիսով, խոսքը ոչ թե «Արցախի վերաբերյալ գրքի» մասին է, այլ պատմավավերագրական նյութերի ժողովածուի, որտեղ օգտագործվել են հենց ամերիկյան մամուլի արձագանքները:

Սա կարեւոր է, քանի որ այդ գիրքը կապում է անցյալ դարասկզբի պատմական իրադարձությունները՝ ժամանակակից Արցախի հարցի հետ, եւ դրանք ներկայացնում է անկախ ամերիկյան աղբյուրների միջոցով, ինչը նշանակում է օբյեկտիվ տեսանկյուն եւ վավերագրական հիմք: Ահա՝ այս ժողովածուն նվիրելը Փաշինյանը գնահատեց որպես «սադրիչ քայլ» եւ պահանջեց դիմում գրել գիտնական տնօրենին: Մինչդեռ, եթե չլիներ այս ժողովածուն, ապա այսօր շատ ավելի հեշտ կլիներ ադրբեջանցիների համար՝ ներկայացնել, թե այդ նույն թվերին հայերն են ադրբեջանցիներին ցեղասպանության ենթարկել, ոչ հակառակը՝ ոչ ավելի եւ ոչ պակաս:

Եվ դառնանք զօղորմին տի տանք բոլոր հայ պատմաբանների անցավորներին: Հայ պատմաբան գիտնականների հետեւողական եւ բազմակողմանի աշխատանքի շնորհիվ է, որ այսօր կա այդ ժողովածուն, եւ այսքան պատեհ պահին այն հայտնվել է ամերիկյան պաշտոնյայի ձեռքում՝ մի քայլ առաջ պատմությունը կեղծողների գործողություններից: Գիրքը Գզոյանը նվիրել է Վենսին փետրվարի 10-ին, իսկ մարտի 31-ին Ադրբեջանի մարդու իրավունքների պաշտպան Սաբինա Ալիեւան հերթական հայտարարությունն է տարածել «Ադրբեջանցիների ցեղասպանության օրվա» կապակցությամբ: Այս հայտարարությամբ պնդում է, թե հայերն իրականացրել են «ցեղասպանություն», «էթնիկ զտում» եւ զանգվածային բռնություններ իրենց նկատմամբ, հատկապես 1918-1920 թվականներին:

Այս ձեւակերպումները, իհարկե, նոր չեն. դրանք արդեն տասնամյակներ ներգրավված են Ադրբեջանի պետական պատմագրության եւ պետական նարատիվի շրջանակներում՝ ծառայելով քաղաքական շահերին եւ պատմության շարունակական կեղծման նպատակներին: Իսկ ինչ է բխում հայկական շահից, երբ օգնում են թշնամուն՝ պատմությունը ներկայացնել գլխիվայր եւ ի վնաս հայ ժողովրդի:

Թե բա. «Երբ երկրի վարչապետը հայտարարում է, որ Ղարաբաղյան շարժում չկա, ինչ է նշանակում օտարերկրյա հյուրին Արցախի թեմայով գիրք նվիրելը: Այս երկրում քանի՞ հոգի կարող է արտաքին քաղաքականություն վարել»: Նեղսրտում է Փաշինյանը՝ այն, ինչ ինքը վարում է, անվանելով արտաքին քաղաքականություն:

Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենը քաղաքականություն վարող չէ, նա գիտնական է, որը գործ ունի անցյալի հետ, իսկ անցյալի անցքերն այլեւս փակել հնարավոր չէ, ինչ եղել՝ եղել է: Փաշինյանն այսօր վարում է այն քաղաքականությունը, որ պատմական անցքերը մոռացության է տալիս: Ձայլամի նման գլուխը թաքցրած ավազի մեջ, նա չի տեսնում, որ վտանգի տակ է հայտնվել պոչը. այն ամենը, ինչ ինքը թաքցնում ու մոռանում է, թշնամին հավաքում է եւ խնամքով փաթեթավորում՝ որպես իր հետ կատարված փաստ:

Փաշինյանը կարծում է, թե իրեն կհաջողվի այս կեղծ, միակողմանի բարեկամության հիմքով, ավազի վրա կառուցել խաղաղության ամրոց: Բայց կյանքն այդպիսին չէ: Դրանով էլ որեւէ քաղաքականություն մշակելն ու վարելը բարդ է, որովհետեւ մեկ անձի ինքնախաբեության, ֆանտազիաների եւ երեւակայության վրա հենվել չի կարող: Չեն կարող մեկ մարդու վախերն ու անհիմն հույսերն ամբողջանալ՝ դառնալով քաղաքականություն եւ պարտադրվել ներսից՝ իր հայրենակիցներին, որոնք դրան համաձայն չեն, եւ պարտադրվել դրսին՝ թշնամիներին, որոնք զարմանալիորեն նույնպես դրան համաձայն չեն:

Եվ ահա, սա է այն, ինչ ունենք այս պահին փաշինյանական իրական Հայաստանում. մինչ այստեղ սահմանափակվում է պատմական փաստերի ներկայացումը, նույն ժամանակ Ադրբեջանում պետական մակարդակով ակտիվորեն կառուցվում է հակահայկական նարատիվը՝ նույն փաստերը գլխիվայր շուռ տված ներկայացնելով աշխարհին: Ինչո՞ւ դա չեն նկատում Փաշինյանն ու իր քաղաքական թիմը: Թերեւս այս հարցերը միայն հռետորական են, իրականում՝ ամեն նորմալ տրամաբանող մարդու համար հասկանալի է, թե ինչու:

Եվ, ուրեմն, դառնանք զօղորմին տի տանք բոլոր այն հայերի նախնիներին, որոնք պայքարել են հանուն պատմական արդարության եւ մեզ փոխանցել հայի արժանապատվությունը, հայի հիշողությունը: Բայց եթե անգամ խայտառակ պատերազմից ու ամոթալի պարտությունից հետո հայի արժանապատվությունն ընկճված է ու վիրավոր, միեւնույն է, գոնե անցած դարի սկզբներին ամերիկյան մամուլում հրապարակված փաստերը մեզ թույլ չեն տա մոռանալ իրականությունը, մերժել ողջախոհությունն ու ընդունել պարտվողական քաղաքականությունը՝ որպես խաղաղության հաղթանակ:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 3.04.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՆԻԿՈԼԻԶՄՆ ԱՅԼԱՍԵՐՈՒՄ Է ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ՝ ՎԵՐԱԾԵԼՈՎ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՀՈՏԻ



Պետրոս ՄԱԿԵՅԱՆ

Սկիզբը՝ նախորդ համարներում

2020թ. 44-օրյա պատերազմում կանխորոշված պարտության տանելուց հետո նիկոլիզմը մեկ խնդիր է լուծում՝ ամեն գնով պահել իշխանությունը, ստորադասելով պետական ու ազգային շահերը, կատարելով թշնամու բոլոր պահանջները, մուրալ «խաղաղության պայմանագիր»՝ ստորացուցիչ պայմաններով, տանելով վերջնական կապիտուլյացիայի:

Մաս 3

Երբ վերլուծում ենք 2021թ. ԱԺ արտահերթ ընտրությունների արդյունքները, համոզված կարելի է պնդել, որ պետք է լիներ երկրորդ փուլ, որի դեպքում անխուսափելի էր նիկոլիզմի պարտությունը, դրա համար էլ գործի դրվեց մուկուչյանական մեթոդաբանությունը, ինչի արդյունքում ընտրողների մասնակցության թիվն ավելացավ եւ գերազանցեց 2018թ. ԱԺ արտահերթ ընտրությունների մասնակիցներին, որը չունի որեւէ տրամաբանական բացատրություն, հատկապես հաշվի առնելով 2018 թ. ընտրությունների ժամանակ հասարակության շատ բարձր էմոցիոնալ տրամադրությունը, իսկ վերջին ընտրություններին ժողովրդի խիստ անկումային հոգեվիճակը, ինչպես նաեւ՝ ընտրողների զգալի մասի պասիվությունն ու մասնակցություն չունենալը, հիմնավորում է 2021-ի ԱԺ ընտրություններին թվանկարչության առկայությունը:

Փաստորեն, ընտրության արձանագրված արդյունքների համաձայն, մասնակիցների 80 տոկոսից ավելին քվեարկել է երկիրն աղետի հասցրած ուժերի օգտին՝ ի դեմս նախկին եւ գործող իշխանությունների, ընդ որում, ըստ արձանագրված տվյալների, 54 տոկոսը, փաստորեն, կողմ է քվեարկել նոյեմբերի 9-ի կապիտուլյացիոն հայտարարության վավերացմանը, բայց երբ ուսումնասիրում ու վերլուծում ես, իրական պատկերն այլ է: Պարզվում է՝ 54 տոկոս ընտրազանգվածը հիմնականում ոչ թե քվեարկել է Ն. Փաշինյանի օգտին, այլ՝ ընդդեմ նախկինների, բայց ոչ թե նրանցից վախենալու, այլ վրեժխնդիր լինելու համար, որովհետեւ քվեարկողները, մեծ հաշվով, կորցնելու բան չունեին, որ նախկինների վերադարձից վախենային, ուղղակի այդ ընտրազանգվածը վրեժխնդիր է եղել նախկիններից՝ տասնամյակներ շարունակ իրենց ապրանքի վերածելու, ընտրություններին 5000-10000 դրամով գնելու եւ կրիմինալի վերահսկողությամբ ընտրատեղամաս ուղղորդելու համար: Քվեարկության ժամանակ աշխատել է անձնական վրեժխնդրության գործոնը, ցավոք, այն գործեց ընդդեմ ազգային շահի: Ընտրություններում հակադրվեցին անձնական վրեժխնդրությունն ու ազգային արժանապատվությունը, որտեղ, ցավոք, պարտվեց ազգայինը, ինչն ազգային խայտառակություն էր: Ընտրությունները չլուծեցին նաեւ քաղաքական ճգնաժամը, եւ այն, ինչ Փաշինյանն անընդմեջ կրկնում է, որ իրենք ժողովրդից մանդատ են ստացել, իրականության հետ որեւէ աղերս չունի, ավելին՝ նրանք «մանդատը» ստացել են տասնամյակներ երկիրը ճահճի մեջ ներքաշած այն ընտրազանգվածից, որոնք նախկինում քվեարկել են ընտրակաշառքով, իսկ վերջին ընտրություններում, ի հեճուկս նախկինների, քվեարկել են Նիկոլ Փաշինյանի օգտին:

Իմ խորին համոզմամբ, այդ ընտրազանգվածը բոլոր ժամանակներում քվեարկել ու քվեարկում է իշխանությունների օգտին: Նիկոլ Փաշինյանը եւ իր թիմը 8 տարի ոչինչ չկարողացան անել՝ երկիրը տարան պատերազմի ու պարտության՝ իր կործանարար հետեւանքներով, այլեւս ի վիճակի չեն որեւէ բան դեպի դրականը փոխել, եւ նրանց իշխանավարումը ոչ միայն կորսված ժամանակ է մեր պետության համար, այլեւ լի է աղետաբեր զարգացումներով: Աններելին այն է, որ Նիկոլն արեց առավելագույնը՝ իրենից հետո հույսի ոչ մի շող չթողնելու համար:

Նիկոլիզմի հիմնասյուներից է նաեւ ազգային արժանապատվության իսպառ բացակայությունը, նպատակ ունենալով հասարակությանը վերածել կառավարվող հոտի, որով եւ վտանգում է պետականության գոյությունը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am